

**Խորհրդի 2004/67/ԵՀ հրահանգը չեղյալ ճանաչող՝ գազի անխափան
մատակարարման ապահովմանն ուղղված միջոցների վերաբերյալ Եվրոպական
պառլամենտի և Խորհրդի 2010 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ 994/2010 (ԵՀ)
կանոնակարգ**

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

Պաշտոնական տեղեկագիր, L 295 , 12.11.2010թ., էջեր 0001-0022

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը, և,
մասնավորապես, դրա 194(2) հոդվածը,

հաշվի առնելով Եվրոպական հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի
եզրակացությունը [1],

խորհրդակցելով Տարածաշրջանների հարցերով կոմիտեի հետ,

գործելով սովորական օրենսդրական ընթացակարգին համապատասխան [2],

Քանի որ

1) բնական գազը (այսուհետ՝ գազը) Եվրոպական միությունում էներգամատակարարման
կարևոր բաղադրիչներից է՝ կազմելով հիմնական էներգամատակարարման մեկ
քառորդը և օգտագործվելով հիմնականում էլեկտրաէներգիայի արտադրության ու
ջեռուցման իրականացման համար, կամ որպես արդյունաբերական հումք և
տրանսպորտային վառելիք,

2) Եվրոպայում գազի սպառման ծավալները վերջին 10 տարիների ընթացքում զգալիորեն
աճել են: Տեղական արտադրության անկման պայմաններում ավելի ևս մեծացել են գազի
ներկրման ծավալները՝ ստեղծելով ավելի մեծ կախվածություն ներկրումներից, ինչպես
նաև գազի անխափան մատակարարմանն ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու
անհրաժեշտություն: Բացի դրանից, որոշ անդամ պետություններ Միության մյուս
երկրների հետ ենթակառուցվածքների միջոցով միացման բացակայության հետևանքով
հայտնվել են գազի կղզյակներում,

3) հաշվի առնելով Միության էներգետիկ կառուցվածքում գազի կարևորությունը՝ սույն Հրահանգը նպատակ ունի հավաստիացնելու գազ սպառող բաժանորդներին, որ ձեռնարկվում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ գազի անընդհատ մատակարարումն ապահովելու համար՝ մասնավորապես դժվար կլիմայական պայմանների և մատակարարման խափանման դեպքերում: Հայտնի է, որ այս նպատակները պետք է իրականացվեն տնտեսապես ամենաարդյունավետ միջոցներով՝ այլ վառելիքների համեմատությամբ այս վառելիքի հարաբերական մրցունակության վրա չազդելու նպատակով,

4) Խորհրդի 2004/67/ԵՀ հրահանգով [3] առաջին անգամ Համայնքի մակարդակով սահմանվեց իրավական շրջանակ՝ գազի անխափան մատակարարումն ապահովելու և մատակարարման խափանումների դեպքում գազի ներքին շուկայի բնականոն գործունեությանը նպաստելու նպատակով: Դրանով ստեղծվեց Գազի համակարգման խումբը, որը նպաստել է տեղեկությունների փոխանակմանը և անդամ պետությունների, Հանձնաժողովի, գազի արդյունաբերության ու բաժանորդների համար միասնական գործողություններ սահմանելուն: Էներգետիկ անվտանգության շահառուների ցանցը, որը հաստատվել է 2006 թվականի դեկտեմբերին Եվրոպական խորհրդի կողմից, բարելավել է տեղեկությունների հավաքագրման արդյունավետությունը և տրամադրել է վաղ նախազգուշացումներ էներգիայի անխափան մատակարարմանը սպառնացող հնարավոր վտանգների մասին: Էներգիայի ներքին շուկայի վերաբերյալ նոր օրենսդրությունը, որն ընդունվել է 2009 թվականի հուլիսին Եվրոպական պառլամենտի և Խորհրդի կողմից, պարունակում է էներգիայի ներքին շուկայի վերջնական կազմավորմանն ուղղված կարևոր քայլ և ակնհայտորեն ուղղված է Միությունում էներգիայի անխափան մատակարարման ամրապնդմանը,

5) այնուամենայնիվ, գազի անխափան մատակարարմանն ուղղված ներկա միջոցների շնորհիվ, որոնք ձեռնարկվել են Միության մակարդակով, անդամ պետություններն ունեն միջոցների ընտրության մեծ շրջանակ: Եթե վտանգված է որևէ անդամ պետության անխափան գազամատակարարումը, կա ակնհայտ վտանգ, որ այդ անդամ պետության կողմից միակողմանիորեն սահմանված միջոցները կարող են խափանել գազի ներքին շուկայի պատշաճ գործունեությունը և բաժանորդներին գազի մատակարարումը: Վերջին իրադարձությունները ցույց են տվել այդ վտանգի իրական լինելը: Որպեսզի գազի ներքին շուկան գործի նույնիսկ առաջարկի պակասի դեպքում, անհրաժեշտ է նախատեսել համերաշխություն ու համակարգում մատակարարման ճգնաժամային իրավիճակների

դեպքում՝ թե՛ կանխարգելիչ գործողությունների, թե՛ մատակարարման խափանումներին արձագանքելու մասով,

6) ցածր ջերմարարությամբ գազը մատակարարվում է Միության որոշ շրջաններում: Հաշվի առնելով դրա առանձնահատկությունները՝ ցածր ջերմարարությամբ գազերը չեն կարող օգտագործվել բարձր ջերմարարությամբ գազերի համար նախատեսված սարքավորումներում: Այնուամենայնիվ, ցածր ջերմարարությամբ գազի համար նախատեսված սարքավորումներում հնարավոր է օգտագործել բարձր ջերմարարությամբ գազ՝ պայմանով, որ այն փոխակերպվի ցածր ջերմարարությամբ գազի՝ օրինակ ազոտ ավելացնելով : Ցածր ջերմարարությամբ գազի առանձնահատկությունները պետք է հաշվի առնվեն ազգային ու տարածաշրջանային մակարդակով, ինչպես նաև դիտարկվեն ռիսկի գնահատման և Կանխարգելիչ գործողությունների ու Արտակարգ իրավիճակներին արձագանքելու ծրագրերում՝ ազգային ու տարածաշրջանային մակարդակներով,

7) Միության մատակարարման ուղիների և աղբյուրների բազմազանեցումը կարևոր է ամբողջ Միությունում և առանձին անդամ պետություններում անխափան մատակարարումը բարելավելու համար: Անխափան մատակարարումը կախված է լինելու վառելիքի կառուցվածքի փոփոխություններից, Միությունում և Միության մատակարարումն ապահովող երկրներում արտադրության զարգացումից, ինչպես նաև պահեստարաններում և գազի մատակարարման ուղիների ու մատակարարման աղբյուրների բազմազանեցման համար, այդ թվում՝ Հեղուկացված բնական գազի (ՀԲԳ) կայաններում կատարվող ներդրումներից: Այս համատեքստում առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձվի ենթակառուցվածքների ուղղությամբ ձեռնարկվող գործողություններին, որոնք նշված են Հանձնաժողովի 2008 թվականի նոյեմբերի 13-ի «Էներգիայի վերաբերյալ երկրորդ ռազմավարական ծրագիր. Էներգետիկ անվտանգության ու համերաշխության ԵՄ գործողությունների ծրագիր» հաղորդագրության մեջ, որոնցից են, օրինակ, հյուսիսային գազատարը (Նաբուկո և Թուրքիա-Հունաստան-Իտալիա փոխմիացում), Եվրոպայի համար բազմազանեցված ու համարժեք ՀԲԳ մատակարարումը, Բալթյան տարածաշրջանի արդյունավետ փոխմիացումը, Միջերկրական Էներգետիկ օղակը և համապատասխան հյուսիս-հարավային փոխմիացումները կենտրոնական ու հարավարևելյան Եվրոպայի տարածքում,

8) գազի մատակարարման խափանմամբ պայմանավորված հնարավոր ճգնաժամային իրավիճակի ազդեցությունը նվազեցնելու նպատակով անդամ պետությունները պետք է նպաստեն էներգիայի աղբյուրների և գազի մատակարարման ուղիների ու մատակարարման աղբյուրների բազմազանեցմանը,

9) Միության գազամատակարարման խոշոր խափանումը կարող է ազդել բոլոր անդամ պետությունների, ամբողջ Միության և 2005 թվականի հոկտեմբերի 25-ին ստորագրված «էներգետիկ Համայնքի հիմնադրման մասին» պայմանագրի [4] պայմանավորվող կողմերի վրա: Նմանապես, գազի մատակարարման խափանումը կարող է ունենալ մեծ սոցիալական ազդեցություն՝ մասնավորապես սպառողների խոցելի խմբերի վրա,

10) որոշ բաժանորդներ, այդ թվում՝ մասնավորապես կենցաղային սպառող ունեցող բաժանորդները, և այնպիսի կարևոր սոցիալական ծառայություններ մատակարարող բաժանորդները, ինչպիսիք են առողջապահական ու երեխաների խնամքի ծառայությունները, կրթական ծառայությունները և այլ սոցիալական ծառայություններ, ինչպես նաև այնպիսի ծառայություններ, որոնք անհրաժեշտ են որևէ անդամ պետության գործունեության համար, առավել խոցելի են ու կարող են պաշտպանության կարիք ունենալ: Նման պաշտպանված բաժանորդների համապարփակ սահմանումը չպետք է հակասի Եվրոպական համերաշխության մեխանիզմներին,

11) «Անվտանգության Եվրոպական ռազմավարության իրականացման մասին» զեկույցում, որը հաստատվել է Եվրոպական պառլամենտի կողմից 2008 թվականի դեկտեմբերին, ընդգծվում է ներկրվող էներգիայից կախվածությունը՝ որպես հավելյալ վտանգ Միությունում էներգիայի անխափան մատակարարման համար, իսկ էներգիայի անխափան մատակարարումն առանձնացվում է որպես մարտահրավեր անխափան մատակարարման մասով քաղաքականության համար: Գազի ներքին շուկան առանցքային է Միությունում էներգիայի անխափան մատակարարումը բարձրացնելու և առանձին անդամ պետությունների վրա մատակարարման խափանումների բացասական ազդեցությունները նվազեցնելու համար,

12) գազի ներքին շուկայի բնականոն գործունեության համար կարևոր է, որ գազի անխափան մատակարարումն ապահովվելու ուղղությամբ ձեռնարկվող միջոցները չազդեն մրցակցության կամ գազի ներքին շուկայի արդյունավետ գործունեության վրա,

13) Գազի միասնական ամենամեծ ենթակառուցվածքի աշխատանքի խափանումը՝ այսպես կոչված N – 1 սկզբունքը, միանգամայն ռեալ սցենար է: Նման

ենթակառուցվածքի աշխատանքի խափանումը որպես անդամ պետությունների կողմից հատուցման ենթակա ցուցանիշ օգտագործումը հիմնավոր ելակետ է յուրաքանչյուր անդամ պետության գազի անխափան մատակարարման վերլուծության համար,

14) անդամ պետության ու ամբողջ Միության տարածքում բավարար ու բազմազանեցված գազի ենթակառուցվածքը, այդ թվում՝ մասնավորապես գազի նոր ենթակառուցվածքը, որը կապում է գազի կղզյակներ ստեղծող ներկա առանձնացված համակարգերը իրենց հարևան անդամ պետություններին, կարևոր է մատակարարման խափանումների դեմ պայքարելու համար: Գազի անխափան մատակարարման նվազագույն ընդհանուր չափորոշիչները կարող են ապահովել մրցակցային հավասար պայմաններ գազի անխափան մատակարարման համար՝ հաշվի առնելով ազգային կամ տարածաշրջանային առանձնահատկությունները, և կարող են ապահովել զգալի խրախուսման միջոցներ՝ անհրաժեշտ ենթակառուցվածքների կառուցման և ճգնաժամային իրավիճակի դեպքում պատրաստվածության մակարդակի բարելավման համար: Պահանջարկի կողմի միջոցները, ինչպիսիք են անցումը վառելիքի այլընտրանքային տեսակներին, կարող են չափազանց մեծ դեր ունենալ էներգիայի անխափան մատակարարման ապահովման համար այն դեպքերում, երբ հնարավոր լինի դրանք արագ կիրառել և զգալիորեն կրճատել պահանջարկը՝ մատակարարման խափանմանն արձագանքելու համար: Էներգիայի արդյունավետ օգտագործման խրախուսումը պետք է շարունակվի, մասնավորապես այն դեպքերում, երբ անհրաժեշտ են պահանջարկի կողմի միջոցներ: Պահանջարկի ու առաջարկի կողմի միջոցների բնապահպանական ազդեցությունը պետք է հաշվի առնվի, և առավելությունը պետք է տրվի հնարավորության սահմաններում այն միջոցներին, որոնք ամենաաննշան ազդեցությունն ունեն շրջակա միջավայրի վրա՝ միևնույն ժամանակ հաշվի առնելով անխափան մատակարարման հայեցակետերը,

15) գազի նոր ենթակառուցվածքներում ներդրումները պետք է խրախուսվեն և իրականացվեն շրջակա միջավայրի ազդեցության գնահատումից հետո՝ Միության համապատասխան իրավական ակտերի համաձայն: Նման նոր ենթակառուցվածքը պետք է ամրապնդի գազի անխափան մատակարարումը՝ միևնույն ժամանակ ապահովելով գազի ներքին շուկայի բնականոն գործունեությունը: Ներդրումները, որպես կանոն, պետք է կատարվեն բնական գազի ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների կողմից և պետք է հիմնված լինեն տնտեսական խրախուսման միջոցների վրա: Պետք է պատշաճ կերպով հաշվի առնվի գազատար ցանցի ենթակառուցվածքում

վերականգնվող աղբյուրներից ստացվող գազն ընդգրկելու անհրաժեշտությունը: Եթե ենթակառուցվածքներում կատարվող ներդրումները միջսահմանային բնույթ են կրում, էլեկտրաէներգիայի ոլորտի կարգավորողների համագործակցության գործակալությունը («Գործակալություն»), որը ստեղծվել է Եվրոպական պառլամենտի և Խորհրդի թիվ 713/2009 (ԵՀ) կանոնակարգով [5], և Գազի փոխադրման համակարգի օպերատորների եվրոպական ցանցը (Գազի ՓՀՕԵՑ), որը ստեղծվել է Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի հուլիսի 13-ի «Գազի փոխադրման ցանցերին միանալու պայմանների մասին» թիվ 715/2009 կանոնակարգով, պետք է անմիջական մասնակցություն ունենան իրենց համապատասխան իրավասությունների շրջանակում՝ միջսահմանային խնդիրներն առավել արդյունավետ կերպով հաշվի առնելու համար: Հիշատակվում է, որ թիվ 713/2009 (ԵՀ) կանոնակարգի համաձայն՝ Գործակալությունը կարող է ներկայացնել եզրակացություններ կամ առաջարկներ միջսահմանային խնդիրների մասին՝ իրավասության և գործունեության իր շրջանակում: Գործակալությունը և Գազի ՓՀՕԵՑ-ը շուկայի այլ մասնակիցների հետ կարևոր դեր ունեն ցանցի զարգացման՝ ամբողջ Միությունն ընդգրկող տասնամյա ծրագրի կազմման և իրականացման գործում, որը մասնավորապես, ներառում է, Առաջարկի համարժեքության եվրոպական հեռանկարը, իսկ միջսահմանային փոխմիացումների մասով պետք է, մասնավորապես, հիմնված լինի ցանցից բոլոր օգտվողների պահանջների վրա:

16) իրավասու մարմինները կամ անդամ պետությունները պետք է ապահովեն, որ գազի շուկան ենթարկվի ստուգումների, որը ենթակառուցվածքի ստանդարտի հետ համապատասխանությունը հաստատելու գործընթացի անհրաժեշտ քայլերից մեկն է:

17) սույն Կանոնակարգով նշված քայլերն իրականացնելիս իրավասու մարմինները պետք է սերտորեն համագործակցեն այլ իրավասու ազգային մարմինների հետ և, մասնավորապես, ազգային կարգավորող մարմինների հետ՝ անհրաժեշտության սահմաններում և չհակասելով Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի հուլիսի 13-ի «Բնական գազի ներքին շուկայի միասնական կանոնների մասին» 2009/73/ԵՀ հրահանգով սահմանված իրենց լիազորություններին,

18) եթե անհրաժեշտ են նոր միջսահմանային փոխմիացումներ, կամ գոյություն ունեցող փոխմիացումները պետք է ընդլայնվեն, համապատասխան անդամ պետությունների, իրավասու մարմինների ու ազգային կարգավորող մարմինների միջև սերտ համագործակցությունը պետք է իրականացվի վաղ փուլում,

19) Միության կողմից ֆինանսավորման տարբեր աղբյուրների հաշվին, մասնավորապես Ներդրումների եվրոպական բանկի կողմից տրամադրվող վարկերի ու երաշխիքների կամ տարածաշրջանային, կառուցվածքային կամ համերաշխության հիմնադրամների կողմից տրամադրվող միջոցների հաշվին անդամ պետությունները կարող են ֆինանսավորել արտադրությունում, ենթակառուցվածքներում և էներգաարդյունավետ միջոցառումների համար ազգային ու տեղական մակարդակով կատարվող ներդրումները, Ներդրումների եվրոպական բանկը, ինչպես նաև Միության արտաքին գործիքները, ինչպիսիք են Եվրոպական հարևանության ու գործակցության գործիքը, Նախաանդամակցային օժանդակության գործիքը և Զարգացման համագործակցության ֆինանսավորման գործիքը, նույնպես կարող են երրորդ երկրներում ֆինանսավորմանն ուղղված գործողությունների հիմք լինել՝ էներգիայի անխափան մատակարարումն ապահովելու նպատակով,

20) սույն Կանոնակարգը պետք է նպաստի, որ բնական գազի ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտներն ու գազ սպառող բաժանորդները մատակարարման խափանման դեպքում հնարավորության սահմաններում ապավինեն շուկայական մեխանիզմներին: Կանոնակարգով պետք է նաև նախատեսվեն վթարային մեխանիզմներ, որոնք պետք է օգտագործվեն այն դեպքերում, երբ շուկան այլևս ինքնուրույն չի կարող պատշաճ մակարդակով լուծել գազամատակարարման խափանման խնդիրները: Նույնիսկ արտակարգ իրավիճակներում մատակարարման խափանման ազդեցությունները մեղմացնելու համար նախապատվությունը պետք է տրվի շուկայական գործիքներին,

21) 2009 թվականի հուլիսին ընդունված՝ էներգիայի ներքին շուկայի մասին նոր օրենսդրությունն ուժի մեջ մտնելուց հետո նոր դրույթները պետք է կիրառվեն գազի սեկտորի նկատմամբ՝ սահմանելով հստակ դերեր ու պարտականություններ անդամ պետությունների, ազգային կարգավորող մարմինների, փոխադրման համակարգի օպերատորների և Գործակալության համար, և բարելավելով շուկայի թափանցիկությունը՝ դրա գործունեությանը ավելի մեծ թափ տալու, գազի անխափան մատակարարումը ու բաժանորդների շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով,

22) գազի ներքին շուկայի ձևավորումը և այդ շուկայի ներսում արդյունավետ մրցակցությունը Միության մասշտաբով կարող են ապահովել անխափան մատակարարման չափազանց բարձր մակարդակ բոլոր անդամ պետությունների համար՝

պայմանով, որ մատակարարման՝ Միության մի մասի վրա ազդող խափանման դեպքում շուկան հնարավորություն կունենա գործելու ամբողջ մասշտաբով՝ անկախ խափանման պատճառից: Այս նպատակով պահանջվում է անխափան մատակարարման նկատմամբ համապարփակ և արդյունավետ միասնական մոտեցում և մասնավորապես թափանցիկություն, համերաշխություն և ոչ խտրական քաղաքականություն, որը համապատասխանում է ներքին շուկայի գործունեությանը՝ բացառելով շուկայի գործունեության խաթարումն ու խափանումներին շուկայի արձագանքի ուշացումը,

23) գազի անխափան մատակարարումն ապահովելը բնական գազի ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների, անդամ պետությունների՝ մասնավորապես դրանց իրավասու մարմինների և Հանձնաժողովի ընդհանուր պարտավորությունն է՝ գործունեության և լիազորությունների իրենց համապատասխան շրջանակում: Հարկ եղած դեպքում, ազգային կարգավորող մարմինները, եթե դրանք իրավասու մարմիններ չեն, պետք է նույնպես նպաստեն գազի անխափան մատակարարմանը՝ գործունեության ու լիազորությունների իրենց շրջանակում՝ 2009/73/ԵՀ հրահանգի համաձայն: Այնուամենայնիվ, այն բաժանորդները, որոնք օգտագործում են գազը էլեկտրաէներգիայի արտադրության կամ արդյունաբերական գործընթացների համար, կարող են նաև կարևոր դեր ունենալ գազի անխափան մատակարարման հարցում՝ պահանջարկի կողմի միջոցներով, ինչպիսիք են դադարեցվող պայմանագրերը և վառելիքի այլընտրանքային ձևերին անցնելը, ճգնաժամին արձագանքելու իրենց ունակությամբ, քանի որ սա ուղղակիորեն ազդում է առաջարկ/պահանջարկ հավասարակշռության վրա,

24) բնական գազի ոլորտում գործող բոլոր տնտեսվարող սուբյեկտների և իրավասու մարմինների դերերի ու պարտականությունների հստակ սահմանումը կարևոր է գազի ներքին շուկայի բնականոն գործունեության պահպանման համար, մասնավորապես մատակարարման խափանումների ժամանակ ու ճգնաժամային իրավիճակներում: Նման դերերն ու պարտականությունները պետք է սահմանվեն այնպես, որպեսզի ապահովվի եռաստիճան մոտեցում, որը կներառի նախ և առաջ բնական գազի սեկտորում գործող համապատասխան տնտեսվարող սուբյեկտներն ու գազային արդյունաբերությունը, հետո անդամ պետությունները ազգային կամ տարածաշրջանային մակարդակով, և այնուհետ՝ Միությունը: Մատակարարման ճգնաժամային իրավիճակի դեպքում շուկայի դերակատարները պետք է ունենան իրավիճակին շուկայական միջոցներով արձագանքելու հավասար հնարավորություն: Եթե շուկայի դերակատարների արձագանքը բավարար չէ, անդամ պետությունները և իրենց իրավասու մարմինները

պետք է միջոցներ ձեռնարկեն՝ մատակարարման ճգնաժամային իրավիճակի ազդեցությունները վերացնելու կամ մեղմացնելու ուղղությամբ: Միայն այն դեպքերում, երբ այս միջոցներն անբավարար են, պետք է միջոցներ ձեռնարկվեն տարածաշրջանային կամ Միության մակարդակով՝ մատակարարման ճգնաժամային իրավիճակի ազդեցությունները վերացնելու կամ մեղմացնելու ուղղությամբ: Տարածաշրջանային մակարդակով լուծումները պետք է ընդունվեն հնարավորինս շուտ,

25) համերաշխության սկզբունքով պետք է ստեղծվի տարածաշրջանային համագործակցություն, այդ թվում՝ պետական իշխանությունների և բնական գազի ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների միջև, սույն Կանոնակարգի իրականացման համար՝ հայտնաբերված ռիսկերը մեղմացնելուն ուղղված միջոցների համակարգման ոլորտում օգուտներն օպտիմալացնելու և շահագրգիռ կողմերի համար ամենաձախսարդյունավետ միջոցները իրականացնելու նպատակով,

26) հաշվի առնելով հանրային ծառայությունների հետ կապված պարտավորությունները և բաժանորդների շահերի պաշտպանությանն ուղղված միջոցները՝ պետք է սահմանվեն բավարար չափով ներդաշնակեցված չափանիշներ մատակարարման անվտանգության համար, որոնց միջոցով առնվազն հնարավոր կլինի կարգավորել 2009 թվականի հունվարին ի հայտ եկած իրավիճակի նման իրավիճակները՝ հաշվի առնելով անդամ պետությունների միջև եղած տարբերությունները: Անխափան մատակարարման չափանիշները պետք է լինեն կայուն՝ անհրաժեշտ իրավական որոշակիության ապահովվելու նպատակով, ինչպես նաև պետք է լինեն հստակ սահմանված, և չպետք է անհիմն ու անհամաչափ պարտականություններ սահմանեն բնական գազի ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների համար, այդ թվում՝ շուկայի նոր դերակատարների և փոքր ձեռնարկությունների կամ վերջնական սպառողների համար: Այդ չափանիշները պետք է նաև Միության բնական գազի ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների համար ապահովեն ազգային բաժանորդներին մատչելի լինելու հավասար հնարավորություններ: Մատակարարման ստանդարտները բավարարելուն ուղղված միջոցները կարող են ներառել պահեստավորման հավելյալ տարողություններ և ծավալներ, մատակարարման մասին պայմանագրեր, դադարեցվող պայմանագրեր կամ ցանկացած այլ միջոց, որը կարող է համանման ազդեցություն ունենալ, ինչպես նաև անհրաժեշտ տեխնիկական միջոցներ՝ գազի անխափան մատակարարումն ապահովելու համար,

27) պատշաճ կերպով գործող գազի շուկայի համար կարևոր է, որ տեղական արտադրությունում և ենթակառուցվածքներում, ինչպիսիք են փոխմիացումները, և մասնավորապես Միության գազատար ցանցին միացումը հնարավոր դարձնող ենթակառուցվածքներում, խողովակաշարերով գազի երկկողմ հոսքը հնարավոր դարձնող սարքավորումներում, ինչպես նաև պահեստարաններում ու ՀԲԳ վերագազաֆիկացման կայաններում ներդրումները բնական գազի ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների կողմից կատարվեն ճիշտ ժամանակին՝ հաշվի առնելով մատակարարման հնարավոր խափանումները, ինչպիսին որ եղավ 2009 թվականի հունվարին: Միության փաստաթղթերի հետ կապված գազի ոլորտի ենթակառուցվածքների ֆինանսական կարիքները գնահատելիս Հանձնաժողովը պետք է, հնարավորության դեպքում, նախապատվությունը տա այն նախագծերին, որոնք նպաստում են գազի ներքին շուկայի ինտեգրմանն ու գազի անխափան մատակարարմանը,

28) փոխադրման համակարգի օպերատորները պետք է կարողանան հաշվի առնել այնպիսի իրավիճակները, երբ երրորդ երկրների հետ միջսահմանային փոխմիացումներով երկու ուղղություններով գազի փոխադրման ֆիզիկական թողունակությունը (երկկողմ թողունակություն) ապահովող ներդրումները կարող են նպաստել անխափան մատակարարմանը, մասնավորապես երրորդ երկրների դեպքում, որոնք ապահովում են գազի տարանցիկ հոսքը երկու անդամ պետությունների միջև,

29) կարևոր է, որ այն դեպքերում, երբ շուկան այդ բաժանորդներին գազամատակարարում չի կարող ապահովել, մատակարարումը պահպանվի մասնավորապես կենցաղային սպառում ունեցող բաժանորդներին, ինչպես նաև մի քանի այլ լրացուցիչ բաժանորդներին, հատկապես այն բաժանորդներին, ովքեր տրամադրում են այնպիսի կարևոր սոցիալական ծառայություններ, որոնք կարող են սահմանվել համապատասխան անդամ պետությունների կողմից: Կարևոր է, որ ճգնաժամային իրավիճակի ժամանակ ձեռնարկվող միջոցները սահմանվեն նախապես և հաշվի առնելով անվտանգության պահանջները, այդ թվում՝ այն դեպքերում, երբ պաշտպանված բաժանորդները միացած են այն նույն բաշխման ցանցին, որին միացած են նաև մյուս բաժանորդները: Նման միջոցները կարող են ներառել նախապես պատվիրված թողունակությանը համահունչ համամասնական կրճատումների կիրառում այն դեպքերում, երբ ենթակառուցվածքի մատչելիության ծավալը նվազեցվում է տեխնիկական պատճառներով,

30) որպես կանոն իրավասու մարմինները պետք է գործեն Արտակարգ իրավիճակներին արձագանքելու իրենց ծրագրի համաձայն: Պատշաճ կերպով հիմնավորված բացառիկ հանգամանքներում նրանք կարող են ձեռնարկել գործողություններ, որոնք չեն համապատասխանում այդ ծրագրերին,

31) կա անխափան մատակարարման պարտավորությունների հետ համապատասխանելու գործիքների մեծ ընտրություն: Այդ գործիքները պետք է օգտագործվեն ազգային, տարածաշրջանային կամ Միության համատեքստում՝ ապահովելու համար, որ դրանք ապահովում են համաչափ և ծախսարդյունավետ արդյունքներ,

32) անխափան մատակարարումն ապահովելու երկարաժամկետ կարողությունը երաշխավորող՝ միջսահմանային բավարար թողունակության համար և այլ ենթակառուցվածքներում կատարվող ներդրումների երկարաժամկետ նախագծման հետ կապված անխափան մատակարարման հայեցակետերի խնդիրները նշված են 2009/73/ԵՀ հրահանգում: Մատակարարման անվտանգության ստանդարտների բավարարման համար կարող է պահանջվել անցումային ժամանակաշրջան, որպեսզի անհրաժեշտ ներդրումները հնարավոր լինի իրականացնել: Ցանցի զարգացման՝ ամբողջ Միությունն ընդգրկող տասնամյա ծրագիրը, որը կազմվել է Գազի ՓՀՕԵՑ-ի կողմից և վերահսկվել՝ Գործակալության կողմից, կարևոր գործիք է՝ Միության մակարդակով անհրաժեշտ ներդրումները պարզելու համար՝ մասնավորապես սույն Կանոնակարգով սահմանված՝ ենթակառուցվածքներին ներկայացվող պահանջները կատարելու նպատակով:

33) գազի ՓՀՕԵՑ-ը և Գործակալությունը, որպես Գազի համակարգման խմբի անդամներ, պետք է իրենց պարտավորությունների շրջանակում ամբողջովին ներգրավված լինեն Միության մակարդակով իրականացվող համագործակցության ու խորհրդակցությունների գործընթացում,

34) գազի համակարգման խումբն այն միակ մարմինն է, որի հետ կարող է խորհրդակցել Հանձնաժողովը՝ Կանխարգելիչ գործողությունների ծրագրերի և Արտակարգ իրավիճակներին արձագանքելու ծրագրերի համատեքստում: Հարկ է նշել, որ Գազի ՓՀՕԵՑ-ն ու գործակալությունը Գազի համակարգման խմբի անդամներ են, և այդ համատեքստում նրանց հետ անհրաժեշտ է խորհրդակցել,

35) մատակարարման խափանումների ժամանակ պատրաստվածության բարձր մակարդակ ապահովելու նպատակով իրավասու մարմինների կողմից պետք է կազմվեն Արտակարգ իրավիճակներին արձագանքելու ծրագրեր՝ բնական գազի ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների հետ խորհրդակցելուց հետո: Նման ծրագրերը չպետք է հակասեն իրար ազգային, տարածաշրջանային կամ Միության մակարդակով: Դրանց բովանդակությունը պետք է հիմնվի գործող ծրագրերի լավագույն փորձի վրա և պետք է սահմանի հստակ դերեր ու պարտականություններ բնական գազի ոլորտում գործող բոլոր տնտեսվարող սուբյեկտների և համապատասխան իրավասու մարմինների համար: Արտակարգ իրավիճակներին արձագանքելու համատեղ ծրագրերը պետք է կազմվեն հնարավորության և անհրաժեշտության դեպքում,

36) Միությունում ի հայտ եկող արտակարգ իրավիճակների ժամանակ անդամ պետությունների միջև համերաշխությունն ամրապնդելու և մասնավորապես նվազ բարենպաստ աշխարհագրական կամ երկրաբանական պայմաններում գտնվող անդամ պետություններին օժանդակելու նպատակով անդամ պետությունները պետք է նախագծեն միջոցներ՝ համերաշխությունն ապահովելու նպատակով: Բնական գազի ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտները պետք է նախագծեն միջոցներ, ինչպիսիք են առևտրային գործարքները, որոնք կարող են ներառել գազի արտահանման ավելացված ծավալներ կամ պահեստարաններում պահվող գազի առավել լայնածավալ բաց թողում: Կարևոր է բնական գազի ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների միջև համաձայնագրերի կնքման խրախուսումը: Արտակարգ իրավիճակներին արձագանքելու ծրագրերով սահմանված գործողությունները ներառում են, անհրաժեշտության դեպքում, մեխանիզմներ, որոնք ապահովում են բնական գազի ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտներին հասցված վնասի արդար ու համարժեք փոխհատուցում: Համերաշխությանն ուղղված միջոցները կարող են առավել նպատակահարմար լինել այն անդամ պետությունների համար, որոնց մասով Հանձնաժողովն առաջարկում է Կանխարգելիչ գործողությունների կամ Արտակարգ իրավիճակներին արձագանքելու համատեղ ծրագրեր տարածաշրջանային մակարդակով,

37) սույն Կանոնակարգի համատեքստում Հանձնաժողովը կարևոր դեր կարող է ունենալ արտակարգ իրավիճակի դեպքում՝ թե՛ Միության, թե՛ տարածաշրջանային մակարդակով,

38) Եվրոպական համերաշխությունը կարող է նաև, անհրաժեշտության դեպքում, լինել Միության և դրա անդամ պետությունների կողմից տրամադրվող քաղաքացիական պաշտպանության օժանդակության տեսքով: Խորհրդի 2007/779/ԵՀ որոշմամբ ստեղծված Համայնքի քաղաքացիական պաշտպանության մեխանիզմը պետք է նպաստի նման օժանդակությանը, ինչպես նաև համակարգի այն,

39) իրենց էներգետիկ ռեսուրսների նկատմամբ անդամ պետությունների ինքնիշխան իրավունքների վրա սույն Կանոնակարգը չի ազդում,

40) Խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 8-ի «Եվրոպայի համար կարևոր ենթակառուցվածքների բացահայտման ու նախագծման և դրանց պաշտպանությունը բարելավելու անհրաժեշտության գնահատման մասին» 2008/114/ԵՀ հրահանգով սահմանվում է Եվրոպայի համար կարևոր ենթակառուցվածքների՝ ներառյալ գազի ոլորտի որոշ ենթակառուցվածքների անվտանգության բարելավմանն ուղղված գործընթաց՝ նախատեսված Միության համար: 2008/114/ԵՀ հրահանգը սույն Կանոնակարգի հետ նպաստում են Միությունում էներգիայի անվտանգությանն ուղղված համապարփակ մոտեցման ձևավորմանը,

41) Արտակարգ իրավիճակներին արձագանքելու ծրագրերը պետք է կանոնավոր կերպով թարմացվեն ու հրապարակվեն: Դրանք պետք է ենթարկվեն փորձագիտական գնահատման ու թեստավորման,

42) գազի համակարգման խումբը պետք է գործի որպես խորհրդատու Հանձնաժողովի համար՝ Միությունում արտակարգ իրավիճակի դեպքում մատակարարման անվտանգությանն ուղղված միջոցների համակարգմանը նպաստելու համար Այն նաև պետք է վերահսկի սույն Կանոնակարգով ձեռնարկվելիք միջոցների համարժեքությունն ու նպատակահարմարությունը,

43) սույն Կանոնակարգով բնական գազի ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտները և անդամ պետությունների իրավասու մարմինները լիազորվում են ապահովել, որ գազի ներքին շուկան մատակարարման խափանման դեպքում հնարավորության սահմաններում գործում է արդյունավետորեն այնքան ժամանակ, մինչև իրավասու մարմինները կձեռնարկեն միջոցներ, որոնք ուղղված կլինեն այն իրավիճակի կարգավորմանը, որի ժամանակ շուկան այլևս չի կարող ապահովել անհրաժեշտ գազամատակարարումը: Նման բացառիկ միջոցները պետք է ամբողջովին

համապատասխանեն Միության իրավունքին, և դրանց մասին Հանձնաժողովը պետք է տեղեկացվի,

44) քանի որ երրորդ երկրների կողմից ապահովվող գազամատակարարումը առանցքային դեր ունի Միությունում գազի անխափան մատակարարման համար, Հանձնաժողովը պետք է համակարգի երրորդ երկրներին վերաբերող գործողությունները՝ խորհրդակցելով մատակարարող և տարանցիկ երրորդ երկրների հետ ճգնաժամային իրավիճակները կարգավորելու և Միություն գազի կայուն հոսքն ապահովվելուն ուղղված միջոցների վերաբերյալ: Հանձնաժողովը պետք է իրավասու լինի ներգրավելու հանձնախումբ, որը կվերահսկի ճգնաժամային իրավիճակներում գազի հոսքը Միություն՝ խորհրդակցելով ներգրավված երրորդ երկրների հետ, և իսկ այն դեպքերում, երբ ճգնաժամն առաջանում է երրորդ երկրներում առկա խնդիրների պատճառով, կստանձնի միջնորդի և օժանդակողի դեր,

45) կարևոր է, որ երրորդ երկրների կողմից ապահովվող մատակարարման պայմանները չխաթարեն մրցակցությունը և համապատասխանեն ներքին շուկայի կանոններին,

46) եթե կան վստահելի տեղեկություններ Միությունից դուրս գոյություն ունեցող այնպիսի իրավիճակի վերաբերյալ, որը կարող է սպառնալ մեկ կամ մի քանի անդամ պետությունների անխափան մատակարարմանը, և որի համար կարող է պահանջվել Միության և երրորդ երկրի վաղ նախազգուշացման մեխանիզմներ, Հանձնաժողովը պետք է անհապաղ այդ մասին տեղեկացնի Գազի համակարգման խմբին, իսկ Միությունը պետք է ձեռնարկի համապատասխան գործողությունները՝ իրավիճակը կարգավորելու համար,

47) 2009 թվականի փետրվարին Խորհուրդը եկավ այն եզրակացության, որ պետք է ամրապնդվի թափանցիկությունն ու վստահելիությունը Հանձնաժողովի և անդամ պետությունների միջև երրորդ երկրների հետ էներգիայի ոլորտում հարաբերությունների, այդ թվում՝ երկարաժամկետ մատակարարման պայմանավորվածությունների վերաբերյալ տեղեկությունների փոխանակման միջոցով՝ միևնույն ժամանակ պահպանելով առևտրային տեսանկյունից կարևոր տեղեկությունները,

48) մինչդեռ «Եվրոպական միության մասին» պայմանագրով և «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրով սահմանված կանոնները, և մասնավորապես մրցակցության մասին կանոնները, կիրառվում են ընդհանուր տնտեսական հետաքրքրություն ներկայացնող ծառայությունների նկատմամբ, եթե նման կանոնների

կիրառումը չի խոչընդոտում նման ծառայությունների տրամադրումը, անդամ պետություններն ունեն մի շարք լիազորություններ հանրային ծառայությունների պարտավորությունների սահմանման, բաշխման և կազմակերպման ժամանակ,

49) քանի որ սույն Կանոնակարգի նպատակը, մասնավորապես՝ Միության տարածքում գազի անխափան մատակարարման ապահովումը, չի կարող բավարար կերպով իրագործվել անդամ պետությունների կողմից, և գործողության մասշտաբի պատճառով կարող է առավել արդյունավետ իրագործվել Համայնքի մակարդակով, ապա Համայնքը կարող է ընդունել ակտեր՝ Համաձայնագրի 5-րդ հոդվածով նախատեսված սուբսիդիարության սկզբունքի համաձայն: Այդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքին համապատասխան՝ սույն Կանոնակարգը չի նախատեսում ավելին, քան անհրաժեշտ է նշված նպատակին հասնելու համար,

50) 2004/67/ԵՀ հրահանգը պետք է չեղյալ ճանաչվի,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Կարգավորման առարկան

Սույն Կանոնակարգը սահմանում է դրույթներ, որոնք ուղղված են գազի անխափան մատակարարմանը՝ ապահովելով բնական գազի ներքին շուկայի բնականոն ու շարունակական գործունեությանը՝ նախատեսելով որոշ բացառիկ միջոցների իրականացումն այն ժամանակ, երբ շուկան այլևս չի կարող ապահովել անհրաժեշտ գազամատակարարումը, և սահմանելով գազի ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների, անդամ պետությունների ու Միության՝ կանխարգելիչ գործողությունների ու մատակարարման որոշ խափանումներին արձագանքելու մասով պարտավորությունների հստակ սահմանում ու բաշխում: Համերաշխության սկզբունքի համաձայն՝ սույն Կանոնակարգով նախատեսվում են նաև թափանցիկ մեխանիզմներ՝ անդամ պետության, տարածաշրջանային և Միության մակարդակով արտակարգ իրավիճակի դեպքում գործողությունների պլանավորման համակարգման ու այդ իրավիճակներին արձագանքելու համար:

Հողված 2

Սահմանումները

Սույն Կանոնակարգի նպատակով կիրառվում են 2009/73/ԵՀ հրահանգի, թիվ 713/2009 Կանոնակարգի (ԵՀ) և թիվ 715/2009 Կանոնակարգի (ԵՀ) սահմանումները:

Բացի դրանից կիրառվում են նաև հետևյալ սահմանումները՝

1. «պաշտպանված բաժանորդներ» նշանակում է կենցաղային սպառում ունեցող բոլոր այն բաժանորդները, որոնք միացած են գազի բաշխման ցանցին, ու բացի դրանից համապատասխան անդամ պետությունը կարող է որոշել, որ այդ բաժանորդների թվում են նաև՝

ա) փոքր ու միջին ձեռնարկությունները՝ պայմանով, որ դրանք միացած են գազի բաշխման ցանցին, ինչպես նաև էական սոցիալական ծառայություններ տրամադրող կառույցները՝ պայմանով, որ դրանք միացած են գազի բաշխման կամ փոխադրման ցանցին, և պայմանով, որ բոլոր այս հավելյալ բաժանորդների կողմից օգտագործվող գազի ծավալը չի կազմում վերջնական գազօգտագործման ավելի, քան 20%-ը, և/կամ

բ) կենտրոնացված ջեռուցման կայաններ, եթե դրանք ապահովում են ջեռուցում կենցաղային սպառում ունեցող բաժանորդների և (ա) կետով նշված բաժանորդների համար՝ պայմանով, որ այս կայանները չեն կարող անցնել այլ վառելիքների օգտագործմանն ու միացած են գազի բաշխման կամ փոխադրման ցանցին:

Հնարավորինս շուտ և ոչ ուշ, քան մինչև 2011 թվականի դեկտեմբերի 3-ը անդամ պետությունները տեղեկացնում են Հանձնաժողովին՝ արդյոք իրենք մտադրվում են ընդգրկել (ա) և/կամ (բ) կետերն իրենց պաշտպանված բաժանորդներին սահմանելիս.

2. «իրավասու մարմին» նշանակում է յուրաքանչյուր անդամ պետության կողմից սույն Կանոնակարգով սահմանված միջոցների իրականացման ապահովման համար նշանակված պատասխանատու ազգային կառավարման մարմին կամ ազգային կարգավորող մարմին: Սա չի սահմանափակում անդամ պետությունների՝ սույն Կանոնակարգով սահմանված որոշ առաջադրանքներ այլ մարմիններին պատվիրակելու իրավունքին: Նման կերպով պատվիրակված առաջադրանքները պետք է կատարվեն իրավասու մարմնի վերահսկողության ներքո և պետք է նշվեն 4-րդ հոդվածով նշված ծրագրերում:

Հոդված 3

Գազի անխափան մատակարարման ապահովման պարտավորությունը

1. Գազի անխափան մատակարարումն ապահովելը բնական գազի ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների, անդամ պետությունների՝ մասնավորապես դրանց իրավասու մարմինների և Հանձնաժողովի ընդհանուր պարտավորությունն է՝ գործունեության և լիազորությունների իրենց համապատասխան շրջանակում: Նման ընդհանուր պարտավորությունը ենթադրում է նրանց միջև համագործակցության բարձր մակարդակ:

2. Հնարավորինս շուտ և ոչ ուշ, քան մինչև 2011 թվականի դեկտեմբերի 3-ը յուրաքանչյուր անդամ պետություն պետք է նշանակի իրավասու մարմին, որն ապահովում է սույն Կանոնակարգով նախատեսված միջոցների իրականացումը: Հարկ եղած դեպքում՝ մինչև իրավասու մարմնի պաշտոնական նշանակումը, գազի անխափան մատակարարման համար պատասխանատու ազգային կառույցներն իրականացնում են այն միջոցները, որոնք հետագայում պետք է իրականացնի իրավասու մարմինը՝ սույն Կանոնակարգի համաձայն: Այդ միջոցներն ընդգրկում են 9-րդ հոդվածով նշված ռիսկի գնահատման իրականացումը և այդ ռիսկի գնահատման հիման վրա՝ Կանխարգելիչ գործողությունների ծրագրի և Արտակարգ իրավիճակներին արձագանքելու ծրագրերի կազմումը, ինչպես նաև ազգային մակարդակով գազի անխափան մատակարարման կանոնավոր մոնիտորինգը: Իրավասու մարմինները պետք է համագործակցեն՝ մատակարարման խափանումը կանխելու և նման խափանման դեպքում վնասները նվազագույնին հասցնելու նպատակով: Անդամ պետությունները պետք է ազատ լինեն, անհրաժեշտության դեպքում, փոփոխել կիրարկող օրենսդրությունը՝ սույն Կանոնակարգի պահանջների հետ համապատասխանելու նպատակով:

3. Յուրաքանչյուր անդամ պետություն անհապաղ ծանուցում է Հանձնաժողովին իրավասու մարմնի անվանման մասին՝ այդ մարմնի նշանակումից անմիջապես հետո և, անհրաժեշտության դեպքում, գազի անխափան մատակարարման համար պատասխանատու այն ազգային կառույցների մասին, որոնք կատարում են իրավասու մարմնի դեր՝ 2-րդ պարբերության համաձայն: Յուրաքանչյուր անդամ պետություն իրավասու մարմինների նշանակման մասին հայտնում է հանրությանը:

4. Սույն Կանոնակարգով նախատեսված միջոցներն իրականացնելիս իրավասու մարմինը պետք է սահմանի ներգրավված մասնակիցների դերերն ու պարտականություններն այնպիսի ձևով, որպեսզի ապահովվի եռաստիճան մոտեցում, որը ներառում է նախ և առաջ բնական գազի սեկտորում գործող տնտեսվարող սուբյեկտներն ու գազային արդյունաբերությունը, հետո՝ անդամ պետություններն ազգային կամ տարածաշրջանային մակարդակով, և այնուհետ՝ Միությունը:

5. Հանձնաժողովը, անհրաժեշտության դեպքում, համակարգում է իրավասու մարմինների գործողությունները տարածաշրջանային կամ Միության մակարդակով, ինչպես սահմանված է սույն Կանոնակարգով, մասնավորապես 12-րդ հոդվածով նշված Գազի համակարգման խմբի կամ 11(4) հոդվածով նշված ճգնաժամերի կառավարման խմբի միջոցով՝ մասնավորապես Միության կամ տարածաշրջանային մակարդակով ի հայտ եկած արտակարգ իրավիճակի դեպքում, ինչպես նշված է 11(1) հոդվածով:

6. Անխափան մատակարարման ապահովմանն ուղղված միջոցները, որոնք նշված են Կանխարգելիչ գործողությունների ծրագրերում ու Արտակարգ իրավիճակներին արձագանքելու ծրագրերում, պետք է լինեն հստակ սահմանված, թափանցիկ, համաչափ, ոչ խտրական և ստուգելի, չպետք է անհարկի խափանեն մրցակցությունը կամ ազդեն գազի ներքին շուկայի արդյունավետ գործունեության վրա, չպետք է վտանգեն մյուս անդամ պետություններում կամ ամբողջ Միության տարածքում գազի անխափան մատակարարումը:

Հոդված 4

Կանխարգելիչ գործողությունների ծրագրի և Արտակարգ իրավիճակներին արձագանքելու ծրագրի կազմումը

1. Յուրաքանչյուր անդամ պետության իրավասու մարմինը բնական գազի ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների, կենցաղային սպառում ունեցող բաժանորդների և արդյունաբերական սպառողների շահերը ներկայացնող համապատասխան կազմակերպությունների ու ազգային կարգավորող մարմնի հետ խորհրդակցելուց հետո, եթե վերջինս իրավասու մարմինը չէ, չհակասելով 3-րդ պարբերությանը, ազգային մակարդակով կազմում է՝

ա) կանխարգելիչ գործողությունների ծրագիր, որը ներառում է բոլոր այն միջոցները, որոնք անհրաժեշտ են 9-րդ հոդվածի համաձայն իրականացված ռիսկի գնահատման արդյունքում հայտնաբերված ռիսկերը վերացնելու կամ մեղմացնելու համար և

բ) Արտակարգ իրավիճակներին արձագանքելու ծրագիր, որը ներառում է բոլոր այն միջոցները, որոնք անհրաժեշտ են 10-րդ հոդվածով նշված գազի մատակարարման խափանման ազդեցությունները վերացնելու կամ մեղմացնելու համար:

2. Կանխարգելիչ գործողությունների ծրագիրը կամ Արտակարգ իրավիճակներին արձագանքելու ծրագիրն ազգային մակարդակով ընդունելուց առաջ իրավասու մարմինները մինչև 2012 թվականի հունիսի 3-ը փոխանակում են Կանխարգելիչ գործողությունների ծրագրի և Արտակարգ իրավիճակներին արձագանքելու ծրագրի իրենց նախնական օրինակներն ու համապատասխան տարածաշրջանային մակարդակով խորհրդակցում են միմյանց հետ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ՝ ապահովելու համար, որ իրենց ծրագրերի նախնական օրինակներն ու միջոցները չեն հակասում մեկ այլ անդամ պետության Կանխարգելիչ գործողությունների ծրագրին ու Արտակարգ իրավիճակներին արձագանքելու ծրագրին, և որ դրանք համապատասխանում են սույն Կանոնակարգին ու Միության իրավունքի մյուս դրույթներին: Նման խորհրդակցումը պետք է իրականացվի մասնավորապես հարևան անդամ պետությունների միջև՝ առանձնապես գազի կղզյակներ ձևավորող առանձնացված համակարգերի և դրանց հարևանությամբ գտնվող անդամ պետությունների միջև, և կարող է ընդգրկել IV հավելվածով սահմանված ինդիկատիվ ցանկում նշված անդամ պետությունները:

3. 2-րդ պարբերությամբ նշված խորհրդակցությունների և Հանձնաժողովի կողմից ստացված հնարավոր առաջարկությունների հիման վրա համապատասխան իրավասու մարմինները կարող են որոշել ազգային մակարդակով կազմված պլաններից բացի կազմել նաև Կանխարգելիչ գործողությունների ծրագրեր տարածաշրջանային մակարդակով (Կանխարգելիչ գործողությունների համատեղ ծրագրեր) և Արտակարգ իրավիճակներին արձագանքելու համատեղ ծրագրեր տարածաշրջանային մակարդակով (Արտակարգ իրավիճակներին արձագանքելու համատեղ ծրագրեր): Համատեղ ծրագրերի դեպքում համապատասխան իրավասու մարմինները պետք է փորձեն, անհրաժեշտության դեպքում, կնքել համաձայնագրեր՝ տարածաշրջանային համագործակցության իրականացման նպատակով: Անհրաժեշտության դեպքում նման համաձայնագրերը պետք է հաստատվեն անդամ պետությունների կողմից:

4. Ազգային և/կամ տարածաշրջանային մակարդակով Կանխարգելիչ գործողությունների կամ Արտակարգ իրավիճակներին արձագանքելու ծրագրեր կազմելիս և իրականացնելիս իրավասու մարմինը պետք է պատշաճ կերպով հաշվի առնի գազի համակարգի անվտանգ շահագործումն ու այդ ծրագրերում նշի այն տեխնիկական սահմանափակումները, որոնք կարող են ազդել ցանցի գործունեության վրա՝ ներառյալ տեխնիկական ու անվտանգության պայմանները, որոնք արտակարգ իրավիճակի դեպքում կարող են հոսքի նվազեցման պատճառ լինել:

5. Կանխարգելիչ գործողությունների ու Արտակարգ իրավիճակներին արձագանքելու ծրագրերը՝ ներառյալ, հնարավորության դեպքում, համատեղ ծրագրերը, պետք է ընդունվեն ու հրապարակվեն ոչ ուշ, քան մինչև 2012 թվականի դեկտեմբերի 3-ը: Նման ծրագրերը պետք է անհապաղ ուղարկվեն Հանձնաժողովին: Հանձնաժողովը պետք է տեղեկացնի Գազի համակարգման խմբին: Իրավասու մարմինները պետք է ապահովեն նման ծրագրերի իրականացման կանոնավոր մոնիտորինգը:

6. 5-րդ պարբերությամբ նշված ծրագրերի համար պատասխանատու իրավասու մարմինների ծանուցումից հետո երեք ամսվա ընթացքում՝

ա) Հանձնաժողովը պետք է գնահատի այդ ծրագրերը՝ (բ) կետի համաձայն: Դա անելու համար Հանձնաժողովը պետք է այդ ծրագրերի մասին խորհրդակցի Գազի համակարգման խմբի հետ և պատշաճ կերպով հաշվի առնի նրա կարծիքը: Հանձնաժողովը ծրագրերի վերաբերյալ իր գնահատումների մասին զեկուցում է Գազի համակարգման խմբին և

բ) այն դեպքում, երբ Հանձնաժողովը, հիմնվելով այդ խորհրդակցությունների արդյունքների վրա՝

(i) գալիս է այն եզրակացության, որ Կանխարգելիչ գործողությունների ծրագիրը կամ Արտակարգ իրավիճակներին արձագանքելու ծրագիրը ռիսկի գնահատմամբ հայտնաբերված ռիսկերը մեղմացնելու համար արդյունավետ չէ, այն կարող է իրավասու մարմինն կամ իրավասու մարմիններին առաջարկել փոփոխել համապատասխան ծրագիրը.

(ii) կարծում է, որ Կանխարգելիչ գործողությունների ծրագիրը կամ Արտակարգ իրավիճակներին արձագանքելու ծրագիրը հակասում է ռիսկի սցենարներին կամ մեկ այլ իրավասու մարմնի ծրագրերին, կամ այն չի համապատասխանում սույն Կանոնակարգի

դրույթներին կամ Միության իրավունքի այլ դրույթներին, Հանձնաժողովը պետք է պահանջի, որ համապատասխան ծրագիրը փոփոխվի.

(iii) կարծում է, որ Կանխարգելիչ գործողությունների ծրագիրը վտանգում է մյուս անդամ պետություններում կամ ամբողջ Միությունում գազի անխափան մատակարարումը, այն պետք է իրավասու մարմնից պահանջի, որ վերջինս վերանայի Կանխարգելիչ գործողությունների ծրագիրը, և կարող է ներկայացնել կոնկրետ առաջարկներ այն փոփոխելու համար: Հանձնաժողովը տրամադրում է իր որոշման հիմքում ընկած պատճառները:

7. Հանձնաժողովի՝ 6(բ)(ii) պարբերությամբ պահանջի մասին ծանուցումից հետո 4 ամսվա ընթացքում իրավասու մարմինը փոփոխում է Կանխարգելիչ գործողությունների կամ Արտակարգ իրավիճակներին արձագանքելու իր ծրագրերը և ծանուցում է դրա մասին Հանձնաժողովին, կամ Հանձնաժողով է ներկայացնում պահանջի հետ համաձայն չլինելու իր պատճառները: Անհամաձայնության դեպքում Հանձնաժողովը կարող է իրավասու մարմնի պատասխանից հետո 2 ամսվա ընթացքում չեղյալ ճանաչել իր պահանջը կամ հրավիրել համապատասխան իրավասու մարմիններին և, եթե Հանձնաժողովը անհրաժեշտ կհամարի, Գազի համակարգման խմբին՝ հարցը քննարկելու նպատակով: Հանձնաժողովը ներկայացնում է ծրագիրը փոփոխելու իր պահանջի հիմքում ընկած պատճառները: Իրավասու մարմինն ամբողջությամբ հաշվի է առնում Հանձնաժողովի դիրքորոշումը: Եթե իրավասու մարմնի վերջնական որոշումը չի համապատասխանում Հանձնաժողովի դիրքորոշմանը, իրավասու մարմինը պետք է, այդ որոշման և Հանձնաժողովի դիրքորոշման հետ, տրամադրի և հրապարակի նման որոշման հիմքում ընկած պատճառները՝ Հանձնաժողովի դիրքորոշման մասին տեղեկությունները ստանալուց հետո 2 ամսվա ընթացքում: Հնարավորության դեպքում իրավասու մարմինը անհապաղ հրապարակում է փոփոխության ենթարկված ծրագիրը:

8. Հանձնաժողովի՝ 6(բ)(iii) պարբերությամբ որոշման մասին ծանուցելուց հետո 3 ամսվա ընթացքում համապատասխան իրավասու մարմինը փոփոխում է Կանխարգելիչ գործողությունների կամ Արտակարգ իրավիճակներին արձագանքելու իր ծրագրերը և ծանուցում է դրա մասին Հանձնաժողովին, կամ Հանձնաժողով է ներկայացնում պահանջի հետ համաձայն չլինելու իր պատճառները: Անհամաձայնության դեպքում Հանձնաժողովը կարող է իրավասու մարմնի պատասխանին հաջորդող երկու ամիսների ընթացքում կարող է որոշել փոփոխել կամ չեղյալ ճանաչել իր պահանջը: Եթե Հանձնաժողովը պահպանում է իր պահանջը, համապատասխան իրավասու մարմինը

Հանձնաժողովի որոշման մասին ծանուցումը ստանալուց հետո 2 ամսվա ընթացքում պետք է փոփոխի ծրագիրը՝ պատշաճ կերպով հաշվի առնելով Հանձնաժողովի՝ 6(բ)(iii) պարբերությամբ նշված առաջարկները, և այդ մասին տեղեկացնում է Հանձնաժողովին:

Հանձնաժողովը պետք է տեղեկացնի Գազի համակարգման խմբին և պատշաճ կերպով հաշվի առնի նրանց առաջարկները փոփոխված ծրագրի վերաբերյալ իր եզրակացությունը կազմելիս, որը պետք է ներկայացվի իրավասու մարմնի ծանուցումից հետո 2 ամսվա ընթացքում: Համապատասխան իրավասու մարմինը պետք է պատշաճ կերպով հաշվի առնի Հանձնաժողովի եզրակացությունը և Հանձնաժողովի եզրակացությունը ստանալուց հետո 2 ամսվա ընթացքում պետք է ընդունի և հրապարակի փոփոխված ծրագիրը:

9. Պետք է պահպանվի առևտրային տեսանկյունից կարևոր տեղեկությունների գաղտնիությունը:

Հոդված 5

Կանխարգելիչ գործողությունների ազգային ու համատեղ ծրագրերի բովանդակությունը

1. Կանխարգելիչ գործողությունների ազգային ու համատեղ ծրագրերը պետք է պարունակեն՝

ա) ռիսկի գնահատման արդյունքները, ինչպես սահմանված է 9-րդ հոդվածով.

բ) այն միջոցները, ծավալները, հզորությունը և ժամանակացույցը, որոնք անհրաժեշտ են ենթակառուցվածի և մատակարարման՝ 6-րդ ու 8-րդ հոդվածներով սահմանված չափանիշները բավարարելու համար՝ ներառյալ, հնարավորության դեպքում, տվյալներ այն մասին, թե ինչքանով պահանջարկի կողմի միջոցները կարող են ճիշտ ժամանակին փոխհատուցել մատակարարման խափանման հետևանքով առաջացած կորուստները, ինչպես նշված է 6(2) հոդվածով, ինչպես նաև տվյալներ 6(3) հոդվածի կիրառման դեպքում ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող գազի ամենամեծ ենթակառուցվածքը որոշելու մասին և 8(2) հոդվածով նախատեսված մատակարարման չափանիշների մասին.

գ) բնական գազի ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների ու այլ համապատասխան մարմինների համար սահմանված պարտավորությունները, այդ թվում՝ գազի համակարգի անխափան աշխատանքի մասով պարտավորությունները.

դ) այլ կանխարգելիչ միջոցներ, ինչպիսիք են հարևան անդամ պետությունների միջև փոխմիացումներն ամրապնդելու անհրաժեշտությանը և գազի մատակարարման ուղիներն ու մատակարարման աղբյուրները բազմազանեցնելու անհրաժեշտությանը վերաբերող անհրաժեշտությունը՝ հնարավորության սահմաններում բոլոր բաժանորդների համար գազի անխափան մատակարարումն ապահովելու նպատակով հայտնաբերված ռիսկերը վերացնելու համար.

ե) հնարավորության դեպքում՝ 4(3) հոդվածով նշված Կանխարգելիչ գործողությունների ծրագրերի ու Արտակարգ իրավիճակներին արձագանքելու ծրագրերը պատրաստելու ու իրականացնելու համար մյուս անդամ պետությունների հետ համագործակցության նպատակով օգտագործվելիք մեխանիզմները.

զ) տեղեկություններ գործող և հետագա փոխմիացումների մասին, այդ թվում՝ այն փոխմիացումների մասին, որոնք ապահովում են Միության գազատար ցանցի մատչելիությունը, միջսահմանային հոսքը, պահեստարանների միջսահմանային մատչելիությունը և երկու ուղղություններով գազը փոխադրելու ֆիզիկական կարողությունը, մասնավորապես արտակարգ իրավիճակի դեպքում.

է) տեղեկություններ հանրային ծառայությունների մասով բոլոր այն պարտավորությունների մասին, որոնք վերաբերում են գազի անխափան մատակարարմանը:

2. Կանխարգելիչ գործողությունների ազգային ու համատեղ ծրագրերի, և մասնավորապես ենթակառուցվածքների՝ 6-րդ հոդվածով սահմանված ստանդարտները բավարարելու համար նախատեսված միջոցների համար պետք է հաշվի առնվի ամբողջ Միությունն ընդգրկող՝ ցանցի զարգացման տասնամյա ծրագիրը, որը պետք է մշակվի Գազի ՓՀՕԵՑ-ի կողմից՝ թիվ 715/2009 Կանոնակարգի (ԵՀ) 8(10) հոդվածի համաձայն:

3. Կանխարգելիչ գործողությունների ազգային ու համատեղ ծրագրերը պետք է հիմնվեն հիմնականում շուկայական միջոցների վրա, և պետք է հաշվի առնեն տնտեսական ազդեցությունը, միջոցների ծախսային ու նպատակային արդյունավետությունը, ազդեցությունը էներգիայի ներքին շուկայի գործունեության վրա, ինչպես նաև ազդեցությունը շրջակա միջավայրի ու բաժանորդների վրա, և չպետք է նախատեսեն

անհարկի բեռ բնական գազի ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների համար, կամ բացասաբար ազդել գազի ներքին շուկայի գործունեության վրա:

4. Կանխարգելիչ գործողությունների ազգային և համատեղ գործողությունների ծրագրերը պետք է վերանայվեն յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ, եթե հանգամանքները չեն թելադրում ավելի հաճախակի վերանայումներ, և պետք է արտացոլեն ռիսկերի վերանայված գնահատումը: Իրավասու մարմինների միջև՝ 4(2) հոդվածով նախատեսված խորհրդակցությունները պետք է իրականացվեն մինչև վերանայված ծրագրի ընդունումը:

Հոդված 6

Ենթակառուցվածքների ստանդարտը

1. Անդամ պետությունները, կամ անդամ պետության կողմից նախատեսված լինելու դեպքում, իրավասու մարմինն ապահովում են, որ ձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ, որպեսզի ամենաուշը մինչև 2014 թվականի դեկտեմբերի 3-ը գազի միասնական ամենախոշոր ենթակառուցվածքի խափանման դեպքում I հավելվածի 2-րդ կետով սահմանված կարգով մյուս ենթակառուցվածքների N – 1 բանաձևով որոշված թողունակությունը, չհակասելով սույն հոդվածի 2-րդ պարբերությանը, այն կարողանա բավարարել հաշվարկային մակերեսի կտրվածքով գազի ընդհանուր պահանջարկն այն օրվա ընթացքում, երբ գրանցվում է գազի բացառիկ մեծ պահանջարկ, և որը, ըստ վիճակագրական հավանականության, տեղի է ունենում յուրաքանչյուր 20 տարին մեկ: Սա չի հակասում, անհրաժեշտության և նպատակահարմարության դեպքում, համակարգի օպերատորների՝ համապատասխան ներդրումներ կատարելու պատասխանատվությանը, ինչպես նաև 2009/73/ԵՀ հրահանգով և թիվ 715/2009 կանոնակարգով (ԵՀ) սահմանված՝ գազի փոխադրման համակարգի օպերատորների պարտավորություններին:

2. Պարտավորությունը, ապահովելու համար, որ մնացած ենթակառուցվածքներն ունենան այնքան թողունակություն, որպեսզի բավարարեն 1-ին պարբերության մեջ նշված գազի ընդհանուր պահանջարկը, նույնպես համարվում է կատարված, եթե իրավասու մարմինը ցույց է տալիս Կանխարգելիչ գործողությունների ծրագրում, որ գազամատակարարման խափանումը կարող է ժամանակին բավարար կերպով շտկվել

պահանջարկին ուղղված շուկայական համապատասխան միջոցներով: Այս նպատակով կիրառվում է I հավելվածի 4-րդ կետով նախատեսված բանաձևը:

3. Հարկ եղած դեպքում, 9-րդ հոդվածում նշված ռիսկի գնահատման համաձայն, համապատասխան իրավասու մարմինները կարող են որոշել, որ սույն հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված պարտավորությունը կատարվում է ազգային մակարդակի փոխարեն տարածաշրջանային մակարդակում: Այս դեպքում 4(3) հոդվածի համաձայն սահմանվում են Կանխարգելիչ գործողությունների համատեղ ծրագրեր: Կիրառվում է I հավելվածի 5-րդ կետը:

4. Յուրաքանչյուր իրավասու մարմին, բնական գազի բնագավառի համապատասխան տնտեսվարող սուբյեկտների հետ խորհրդակցելուց հետո, անհապաղ Հանձնաժողովին է զեկուցում 1-ին պարբերությամբ սահմանված պարտավորությունը չկատարելու, ինչպես նաև այն չկատարելու պատճառների մասին:

5. Գազի փոխադրման համակարգի օպերատորներն ապահովում են անդամ պետությունների միջև բոլոր միջսահմանային փոխմիացումների երկու ուղղություններով մշտական թողունակությունը հնարավորինս շուտ և ամենաուշը մինչև 2013 թվականի դեկտեմբերի 3-ը, բացառությամբ՝

ա) արտադրամասերին, ՀԲԳ-ի կայանքներին և բաշխման ցանցերին միացումների դեպքերի կամ

բ) եթե, 7-րդ հոդվածին համապատասխան, շնորհվել է բացառություն:

Գազի փոխադրման համակարգի օպերատորները, մինչև 2013 թվականի դեկտեմբերի 3-ը, մասամբ կամ ամբողջությամբ, հարմարեցնում են փոխադրման համակարգերի գործունեությունը՝ ապահովելով միջսահմանային փոխմիացումների երկու ուղղություններով գազի ֆիզիկական հոսքը:

6. Եթե միջսահմանային կոնկրետ փոխմիացումն ունի երկու ուղղություններով թողունակություն կամ այն կառուցվում է՝ նշված թողունակությունն ապահովելու նպատակով, ապա 5-րդ պարբերության 1-ին ենթապարբերության մեջ նշված պարտավորությունը համարվում է այդ փոխմիացման մասով կատարված, բացառությամբ, եթե մեկ կամ ավելի անդամ պետություններ, գազի անխափան մատակարարման նկատառումներից ելնելով, դիմել են դրա թողունակությունը

մեծացնելու նպատակով: Եթե փոխմիացման թողունակությունը մեծացնելու համար ներկայացվել է դիմում, ապա կիրառվում է 7-րդ հոդվածով սահմանված ընթացակարգը:

7. Անդամ պետությունները, կամ անդամ պետության կողմից նախատեսված լինելու դեպքում, իրավասու մարմինն ապահովում է, որ առաջինը շուկան պետք է մշտապես հետազոտվի թափանցիկ, մանրամասն և ոչ խտրական ձևով՝ գնահատելու համար, թե արդյոք շուկան պահանջում է ներդրումների կատարում 1-ին և 5-րդ պարբերություններով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ենթակառուցվածքներում:

8. Ազգային կարգավորող մարմինները հաշվի են առնում 1-ին պարբերությամբ սահմանված պարտավորության իրականացման համար նպատակային կատարված ծախսերը և փոխմիացումների՝ երկու ուղղություններով մշտական թողունակության ապահովման ծախսերը, որպեսզի տրամադրեն համապատասխան խթաններ 2009/73/ԵՀ հրահանգի 41(8) հոդվածին և թիվ 715/2009 կանոնակարգի (ԵՀ) 13-րդ հոդվածին համապատասխան թափանցիկ և մանրամասն կերպով սակագներ կամ մեթոդաբանություններ սահմանելիս կամ հաստատելիս: Եթե շուկան չի պահանջում ներդրումների կատարում փոխմիացման՝ երկու ուղղություններով մշտական թողունակության ապահովման համար, և եթե այս ներդրումների համար մեկից ավելի անդամ պետություններում կամ մեկ անդամ պետությունում՝ ի շահ մեկ կամ ավելի մյուս անդամ պետությունների, կատարվում են ծախսեր, ապա համապատասխան բոլոր անդամ պետությունների ազգային կարգավորող մարմինները, նախքան ներդրման մասին որոշում կայացնելը, համատեղ որոշում են, թե ինչպես բաշխեն ծախսերը: Ծախսերի բաշխման ժամանակ հաշվի է առնվում համապատասխան անդամ պետությունների գազի անխափան մատակարարման համար ենթակառուցվածքներում ներդրումներ կատարելու օգուտների չափը: Կիրառվում է թիվ 713/2009 (ԵՀ) կանոնակարգի 8(1) հոդվածը:

9. Իրավասու մարմինն ապահովում է, որ գազի փոխադրման ցանկացած նոր ենթակառուցվածք նպաստի գազի անխափան մատակարարմանը լավ կապակցված ցանցի զարգացման՝ ներառյալ, հարկ եղած դեպքում, բավարար քանակով միջսահմանային մուտքի և ելքի կետերի միջոցով՝ ըստ շուկայի պահանջարկի և սահմանված ռիսկերի: Իրավասու մարմինը, հարկ եղած դեպքում, ռիսկի գնահատման մեջ գնահատում է, թե արդյոք առկա են ներքին խոչընդոտներ և արդյոք տվյալ երկրի մուտքի կետի՝ գազ ընդունելու թողունակությունը և ենթակառուցվածքները,

մասնավորապես փոխադրման ցանցերը կարող են հարմարեցվել գազի ազգային հոսքերը ռիսկի գնահատման մեջ սահմանված գազի միասնական ամենախոշոր ենթակառուցվածքի խափանման սցենարին:

10. Լյուքսեմբուրգը, Սլովենիան և Շվեդիան, բացառության կարգով, չեն պարտավորվում կիրառել սույն հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված պարտավորությունը, սակայն փորձում են կատարել այն՝ միևնույն ժամանակ ապահովելով գազի մատակարարումը գազամատակարարման համակարգի բաժանորդներին՝ 8-րդ հոդվածին համապատասխան: Այդ բացառությունը կիրառվում է՝

ա) Լյուքսեմբուրգի դեպքում՝ որը մյուս անդամ պետությունների հետ ունի առնվազն երկու փոխմիացում, մատակարարման առնվազն երկու տարբեր աղբյուրներ և իր տարածքում գազի պահեստարաններ կամ ՀԲԳ-ի կայան.

բ) Սլովենիայի դեպքում՝ որը մյուս անդամ պետությունների հետ ունի առնվազն երկու փոխմիացում, մատակարարման առնվազն երկու տարբեր աղբյուրներ և իր տարածքում գազի պահեստարաններ կամ ՀԲԳ-ի կայան.

գ) Շվեդիայի դեպքում՝ որն իր տարածքում չունի մյուս անդամ պետությունների հետ գազի տարանցիկ փոխադրման ցանց, որի գազի ներքին տարեկան համախառն սպառումը կազմում է երկու միլիոն տոննա նավթի համարժեքից ցածր, ինչպես նաև գազից ստացված էներգիայի ընդհանուր առաջնային սպառման 5%-ից ցածր:

Նշված երեք անդամ պետություններն ապահովում են, որ շուկան պարբերաբար թափանցիկ, մանրամասն և ոչ խտրական ձևով հետազոտվի՝ ենթակառուցվածքներում ներդրումներ կատարելու անհրաժեշտությունը պարզելու և հետազոտության արդյունքները հրապարակելու նպատակով:

Առաջին ենթապարբերության մեջ նշված անդամ պետությունները տեղեկացնում են Հանձնաժողովին այդ ենթապարբերությամբ սահմանված պայմանների մասով կատարվող որևէ փոփոխության մասին: Առաջին ենթապարբերությամբ սահմանված բացառությունը դադարում է կիրառվել, եթե նշված պայմաններից առնվազն մեկն այլևս չի բավարարվում:

Առաջին ենթապարբերության մեջ նշված անդամ պետություններից յուրաքանչյուրը, մինչև 2018 թվականի դեկտեմբերի 3-ը, Հանձնաժողովին է ներկայացնում զեկույց, որտեղ նկարագրվում է այդ ենթապարբերությամբ սահմանված համապատասխան

պայմանների կատարման իրավիճակը և 1-ին պարբերության մեջ նշված պարտավորության հետ համապատասխանության հեռանկարները՝ հաշվի առնելով ենթակառուցվածքների ստանդարտին բավարարելու տնտեսական ազդեցությունը, շուկայի հետազոտության արդյունքները և տարածաշրջանում գազի շուկայի զարգացումն ու գազի ենթակառուցվածքների զարգացման նախագծերը: Հանձնաժողովը, հաշվի առնելով զեկույցը և այն հանգամանքը, որ այս պարբերության առաջին ենթապարբերությամբ սահմանված համապատասխան պայմաններն արդեն բավարարվել են, կարող է որոշել, որ առաջին ենթապարբերությամբ սահմանված բացառությունը կարող է շարունակել կիրառվել ևս չորս տարի: Դրական որոշում կայացնելու դեպքում սույն ենթապարբերությամբ սահմանված ընթացակարգը կրկին իրականացվում է չորս տարի հետո:

Հոդված 7

Փոխմիացման՝ երկու ուղղություններով թողունակության ապահովման կամ բացառություն հայցելու ընթացակարգը

1. Գազի փոխադրման համակարգի օպերատորները, անդամ պետությունների, բացառությամբ 6(5)(ա) հոդվածին համապատասխան ազատումից օգտվող անդամ պետությունների միջև միջսահմանային փոխմիացումներից յուրաքանչյուրի համար և բացառությամբ, եթե միջսահմանային փոխմիացումներն արդեն ունեն երկու ուղղություններով թողունակություն կամ նշված թողունակությունն ապահովելու համար կառուցվում է փոխմիացումը, և մեկ կամ ավելի անդամ պետություններ, գազի անխափան մատակարարման նկատառումներից ելնելով, չեն պահանջել մեծացնել փոխմիացումների թողունակությունը, 2012 թվականի մարտի 3-ից ոչ ուշ, գազի փոխադրման համակարգի բոլոր մյուս համապատասխան օպերատորների հետ խորհրդակցելուց հետո իրենց անդամ պետություններին, կամ անդամ պետությունների կողմից նախատեսված լինելու դեպքում, իրենց իրավասու մարմիններին կամ իրենց կարգավորող մարմիններին (սույն հոդվածում այսուհետ՝ «համապատասխան մարմիններ») են ներկայացնում՝

ա) հակառակ ուղղությամբ (հակառակ ուղղությամբ թողունակություն) փոխմիացումների՝ երկու ուղղությամբ թողունակության ապահովման մասին առաջարկ կամ

բ) երկու ուղղություններով թողունակություն ապահովելու պարտավորությունից ազատման դիմում:

2. Փոխմիացումների հակառակ ուղղությամբ թողունակության ապահովման առաջարկը կամ 1-ին պարբերության մեջ նշված՝ երկու ուղղություններով թողունակություն ապահովելու պարտավորությունից ազատման դիմումը հիմնվում են շուկայի պահանջարկի գնահատման, առաջարկի ու պահանջարկի կանխատեսումների, տեխնիկական հնարավորությունների, փոխմիացումների հակառակ ուղղությամբ թողունակության ապահովման ծախսերի՝ ներառյալ գազի փոխադրման համակարգի հետագա հզորացման և գազի անխափան մատակարարման օգուտների վրա՝ հաշվի առնելով, հարկ եղած դեպքում, այն հանգամանքը, որ փոխմիացումների հակառակ ուղղությամբ թողունակությունը նպաստում է 6-րդ հոդվածով սահմանված ենթակառուցվածքների ստանդարտի բավարարմանն այն անդամ պետությունների դեպքում, որոնք օգուտ են քաղում փոխմիացումների հակառակ ուղղությամբ թողունակությունից:

3. Փոխմիացումների հակառակ ուղղությամբ թողունակության ապահովման առաջարկը կամ երկու ուղղություններով թողունակություն ապահովելու պարտավորությունից ազատման դիմում ստացած համապատասխան մարմինն անհապաղ ծանուցում է այն մյուս անդամ պետությունների համապատասխան մարմիններին, որոնք, ըստ ռիսկի գնահատման, օգուտ են քաղում փոխմիացումների հակառակ ուղղությամբ թողունակությունից, ինչպես նաև Հանձնաժողովին փոխմիացումների հակառակ ուղղությամբ թողունակության ապահովման առաջարկի կամ երկու ուղղություններով թողունակություն ապահովելու պարտավորությունից ազատման դիմումի մասին: Այդ համապատասխան մարմինը համապատասխան նշված մարմիններին և Հանձնաժողովին այդ ծանուցումն ստանալուց հետո չորս ամսյա ժամկետում հնարավորություն է տալիս հայտնելու իր կարծիքը:

4. Երրորդ պարբերության մեջ նշված ժամկետի ավարտից երկու ամսվա ընթացքում համապատասխան մարմինը, 2-րդ պարբերության մեջ նշված չափորոշիչների և 9-րդ հոդվածին համապատասխան իրականացված ռիսկի գնահատման հիման վրա և հաշվի առնելով սույն հոդվածի 3-րդ պարբերությանը համապատասխան ստացված կարծիքներն ու այն հայեցակետերը, որոնք այնքան էլ տնտեսական չեն, ինչպես օրինակ՝ գազի անխափան մատակարարումը և գազի ներքին շուկայի նպաստմանը՝

ա) շնորհում է ազատում, եթե փոխմիացումների հակառակ ուղղությամբ թողունակությունը զգալիորեն չի մեծացնում ցանկացած անդամ պետության կամ տարածաշրջանի գազի անխափան մատակարարումը, կամ եթե ներդրումների ծախսերը զգալիորեն շատ են, քան գազի անխափան մատակարարման հեռանկարային օգուտները կամ

բ) ընդունում է փոխմիացումների հակառակ ուղղությամբ թողունակության առաջարկը կամ

գ) պահանջում է գազի փոխադրման համակարգի օպերատորից փոփոխել իր առաջարկը:

Համապատասխան մարմինն իր որոշման մասին անհապաղ ծանուցում է Հանձնաժողովին, ինչպես նաև տրամադրում է իր որոշումը հիմնավորող բոլոր համապատասխան տեղեկությունները՝ ներառյալ սույն հոդվածի 3-րդ պարբերությանը համապատասխան ստացված կարծիքները: Համապատասխան մարմինները փորձում են ապահովել, որ նույն փոխմիացման կամ փոխմիացված խողովակաշարերի մասին փոխկապակցված որոշումները չհակասեն միմյանց:

5. Այդ ծանուցումն ստանալուց հետո երկու ամսվա ընթացքում, և եթե համապատասխան մարմնի որոշումների և համապատասխան մյուս մարմինների կարծիքների միջև չկան հակասություններ, ապա Հանձնաժողովը կարող է պահանջել, որ համապատասխան մարմինը փոխի իր որոշումը: Այդ ժամանակահատվածը կարող է մեկ ամսով երկարաձգվել, եթե Հանձնաժողովին անհրաժեշտ են հավելյալ տեղեկություններ: Հանձնաժողովի՝ համապատասխան մարմնի որոշումը փոփոխելու ցանկացած առաջարկ կատարվում է 2-րդ պարբերությամբ և 4-րդ պարբերության (ա) կետով սահմանված բաղադրիչների և չափորոշիչների հիման վրա՝ հաշվի առնելով համապատասխան մարմնի որոշման հիմնավորումները: Համապատասխան մարմինը կատարում է պահանջը՝ փոփոխելով իր որոշումը չորսամսյա ժամկետում: Եթե Հանձնաժողովը չի գործում երկամսյա ժամկետում, ապա համարվում է, որ նա համապատասխան մարմնի որոշման հետ կապված առարկություններ չունի:

6. Եթե 9-րդ հոդվածին համապատասխան իրականացված դիսկի գնահատման արդյունքների համաձայն անհրաժեշտ է ապահովել փոխմիացման հետադարձ ուղղությամբ լրացուցիչ թողունակություն, ապա սույն հոդվածի 1-5 պարբերություններով

սահմանված ընթացակարգը նորից է իրականացվում գազի փոխադրման համակարգի օպերատորի, համապատասխան մարմնի կամ Հանձնաժողովի պահանջով:

7. Հանձնաժողովն ու համապատասխան մարմինը պահպանում են առևտրային տեսանկյունից կարևոր տեղեկությունների գաղտնիությունը:

Հոդված 8

Մատակարարման ստանդարտը

1. Իրավասու մարմինը պահանջում է իր կողմից որոշված բնական գազի բնագավառի տնտեսվարող սուբյեկտներից, որպեսզի վերջիններս ձեռնարկեն լրացուցիչ միջոցներ հետևյալ դեպքերում անդամ պետության գազամատակարարման համակարգի բաժանորդներին գազամատակարարում ապահովելու նպատակով՝

ա) օդի ամենաբարձր ջերմաստիճանների գրանցման այն յոթ օրերի ընթացքում, որը, ըստ վիճակագրական հավանականության, տեղի է ունենում յուրաքանչյուր 20 տարին մեկ.

բ) գազի բացառիկ մեծ պահանջարկի գրանցման առնվազն այն երեսուն օրերի ընթացքում, որը, ըստ վիճակագրական հավանականության, տեղի է ունենում յուրաքանչյուր 20 տարին մեկ.

գ) առնվազն այն երեսուն օրերի ընթացքում, երբ ձմեռային միջին պայմանների ներքո խափանվում է գազի միասնական ամենախոշոր ենթակառուցվածը:

Իրավասու մարմինը, ամենաուշը մինչև 2012 թվականի հունիսի 3-ը, որոշում է առաջին ենթապարբերության մեջ նշված բնական գազի բնագավառի տնտեսվարող սուբյեկտներին:

2. Առաջին պարբերության (բ) և (գ) կետերում նշված երեսնօրյա ժամկետը գերազանցելու դեպքում մատակարարման ստանդարտը կամ գազի անխափան մատակարարման նկատառումներով սահմանված ցանկացած լրացուցիչ պարտավորությունը հիմնվում են 9-րդ հոդվածում նշված ռիսկի գնահատման վրա, արտացոլվում են Կանխարգելիչ գործողությունների ծրագրում և

ա) համապատասխանում են 3(6) հոդվածին.

բ) անպատշաճ կերպով չեն խաթարում մրցակցությունը կամ խոչընդոտում գազի ներքին շուկայի գործունեությանը.

գ) բացասաբար չեն անդրադառնում ցանկացած մյուս անդամ պետության՝ գազամատակարարման համակարգի բաժանորդներին գազ մատակարարելու հնարավորության վրա՝ սույն հոդվածին համապատասխան, ազգային, Միության կամ տարածաշրջանային մակարդակով արտակարգ իրավիճակի դեպքում և

դ) համապատասխանում են 11(5) հոդվածով սահմանված չափորոշիչներին Միության կամ տարածաշրջանային մակարդակով արտակարգ իրավիճակի դեպքում:

Համերաշխության սկզբունքով իրավասու մարմինը Կանխարգելիչ գործողությունների ու արտակարգ իրավիճակներին արձագանքելու ծրագրերում սահմանում է այն եղանակը, թե ինչպես մատակարարման ստանդարտը կամ բնական գազի բնագավառի տնտեսվարող սուբյեկտների վրա դրված լրացուցիչ պարտավորությունը կարող է ժամանակավորապես կրճատվել Միության կամ տարածաշրջանային մակարդակով արտակարգ իրավիճակի դեպքում:

3. Առաջին և երկրորդ պարբերություններին համապատասխան իրավասու մարմնի կողմից սահմանված ժամկետներից հետո կամ 1-ին պարբերությամբ սահմանված պայմաններից ավելի խիստ պայմանների ներքո իրավասու մարմինը և բնական գազի բնագավառի տնտեսվարող սուբյեկտները փորձում են, որքան հնարավոր է, գազ մատակարարել, մասնավորապես, գազամատակարարման համակարգի բաժանորդներին:

4. Բնական գազի բնագավառի տնտեսվարող սուբյեկտների վրա դրված՝ սույն հոդվածով սահմանված մատակարարման ստանդարտները կատարելու պարտավորությունը ոչ խտրական է և անհարկի բեռ չի դնում նշված տնտեսվարող սուբյեկտների վրա:

5. Բնական գազի բնագավառի տնտեսվարող սուբյեկտներին, հարկ եղած դեպքում, հնարավորություն է տրվում կատարել նշված պարտավորությունները տարածաշրջանային կամ Միության մակարդակով: Իրավասու մարմինը չի պահանջում, որպեսզի սույն հոդվածով սահմանված ստանդարտներն ապահովվեն միայն իր տարածքում տեղակայված ենթակառուցվածքով:

6. Իրավասու մարմինն ապահովում է, որ գազամատակարարման համակարգի բաժանորդներին գազ մատակարարելու պայմանները սահմանվեն, չհակասելով գազի

ներքին շուկայի պատշաճ գործունեությանը, և մատակարարման շուկայական արժեքը պահելու գնով:

Հոդված 9

Ռիսկի գնահատումը

1. Յուրաքանչյուր իրավասու մարմին, մինչև 2011 թվականի դեկտեմբերի 3-ը, հետևյալ ընդհանուր բաղադրիչների հիման վրա, կատարում է իր անդամ պետությունում գազի անխափան մատակարարման վրա ազդող ռիսկերի ամբողջական գնահատում՝

ա) կիրառելով 6-րդ և 8-րդ հոդվածներում նշված ստանդարտները, ցույց տալով N – 1 բանաձևի հաշվարկը, ենթադրությունները՝ ներառյալ տարածաշրջանային մակարդակում N – 1 բանաձևի հաշվարկի համար օգտագործված ենթադրությունները և նշված հաշվարկը կատարելու համար անհրաժեշտ տվյալները.

բ) հաշվի առնելով բոլոր անհրաժեշտ ազգային և տարածաշրջանային հանգամանքները, մասնավորապես շուկայի չափը, ցանցի կոնֆիգուրացիաները, համապատասխան անդամ պետությունից փաստացի հոսքը՝ ներառյալ արտահոսքը, երկու ուղղություններով գազի ֆիզիկական հոսքը, այդ թվում՝ գազի փոխադրման համակարգի հետագա հզորացման համար անհրաժեշտ պոտենցիալը, էներգետիկ կառուցվածքում գազի արտադրության, պահեստավորման և դերի առկայությունը, մասնավորապես կապված կենտրոնացված ջեռուցման և էլեկտրականության արտադրության և արդյունաբերության ճյուղերի աշխատանքի հետ, և անվտանգությունը և գազի որակի դիտարկումները.

գ) ստեղծելով գազի բացառիկ մեծ պահանջարկի և մատակարարման խափանման սցենարներ, ինչպես օրինակ՝ գազի հիմնական փոխադրման ենթակառուցվածքների, պահեստարանների կամ ՀԲԳ-ի տերմինալների աշխատանքի խափանումները և երրորդ երկրի մատակարարներից մատակարարումների խափանումները, հաշվի առնելով խափանումների կրկնման պատմությունը, հավանականությունը, սեզոնը, հաճախականությունն ու տևողությունը, ինչպես նաև, հարկ եղած դեպքում, աշխարհաքաղաքական ռիսկերը և գնահատելով նշված սցենարների հավանական հետևանքները.

դ) բացահայտելով մյուս անդամ պետությունների հետ փոխմիացումների, միջսահմանային մատակարարումների, պահեստարանների և փոխմիացումների՝ երկու ուղղություններով թողունակության ապահովման հետ կապված ռիսկերի փոխազդեցությունն ու փոխկապվածությունը.

ե) հաշվի առնելով սահմանային յուրաքանչյուր մուտքի և ելքի կետերի առավելագույն փոխմիացման թողունակությունը:

2. Երբ կիրառվում է 4(3) հոդվածը, համապատասխան իրավասու մարմինները տարածաշրջանային մակարդակում իրականացնում են նաև ռիսկի համատեղ գնահատում:

3. Բնական գազի բնագավառի տնտեսվարող սուբյեկտները, արդյունաբերական գազ սպառողները, տնային տնտեսությունների և արդյունաբերական գազ սպառողների, ինչպես նաև անդամ պետությունների ու իրավասու մարմին չհանդիսացող ազգային կարգավորող մարմնի շահերը ներկայացնող համապատասխան կազմակերպությունները համագործակցում են իրավասու մարմնի հետ և ռիսկի գնահատման համար դրան տրամադրում են բոլոր անհրաժեշտ տեղեկությունները:

4. Ռիսկի գնահատումն առաջին անգամ վերանայվում է ամենաուշը 4-րդ հոդվածում նշված Կանխարգելիչ գործողությունների ու արտակարգ իրավիճակներին արձագանքելու ծրագրերի ընդունումից հետո 18 ամսվա ընթացքում և դրանից հետո յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ նախքան համապատասխան տարվա սեպտեմբերի 30-ը, եթե ստեղծված հանգամանքների արդյունքում անհրաժեշտություն չի առաջանում ավելի հաճախ այն վերանայել: Ռիսկի գնահատման ժամանակ հաշվի են առնվում ներդրումներում արձանագրված առաջընթացը, որն անհրաժեշտ է ապահովելու համար 6-րդ հոդվածով սահմանված ենթակառուցվածքների ստանդարտը, ինչպես նաև նոր այլընտրանքային լուծումների իրականացման ժամանակ հանդիպած՝ երկրին հատուկ դժվարությունները:

5. Ռիսկի գնահատումը՝ ներառյալ դրա վերանայված տարբերակներն անմիջապես ներկայացվում են Հանձնաժողովին:

Հոդված 10

Արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագրերը և ճգնաժամային մակարդակները

1. Արտակարգ իրավիճակներում ազգային և համատեղ գործողությունների ծրագրերը՝

ա) մշակվում են 3-րդ պարբերությամբ սահմանված ճգնաժամային մակարդակների հիման վրա.

բ) սահմանում են բնական գազի բնագավառի տնտեսվարող սուբյեկտների և արդյունաբերական գազ սպառողների՝ ներառյալ էլեկտրաէներգիա արտադրողների դերը և պատասխանատվությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, թե որքան ազդեցություն ունեն գազամատակարարման խափանումները, ինչպես նաև իրավասու մարմինների և 3-րդ պարբերությամբ սահմանված ճգնաժամային մակարդակներից յուրաքանչյուրում ազգային կարգավորող մարմինների հետ դրանց փոխազդեցությունը.

գ) սահմանում են իրավասու մարմինների և այն մյուս մարմինների դերը և պատասխանատվությունը, որոնց տրվել են 3-րդ պարբերությամբ սահմանված ճգնաժամային մակարդակներից յուրաքանչյուրում 2(2) հոդվածում նշված խնդիրները.

դ) ապահովում են, որ բնական գազի բնագավառի տնտեսվարող սուբյեկտներին ու արդյունաբերական գազ սպառողներին ճգնաժամային յուրաքանչյուրում մակարդակում արձագանքելու բավարար հնարավորություն տրվի.

ե) որոշում են, հարկ եղած դեպքում, կենտրոնացված ջեռուցման և գազից ստացված էլեկտրաէներգիայի մատակարարման վրա գազամատակարարման խափանումների հնարավոր ազդեցությունը մեղմելու ուղղությամբ ձեռնարկված միջոցներն ու գործողությունները.

զ) սահմանում են ճգնաժամային յուրաքանչյուր մակարդակում այն մանրամասն ընթացակարգերն ու միջոցները, որոնց պետք է հետևել՝ ներառյալ տեղեկատվական հոսքի համապատասխան սխեմաները.

է) սահմանում են ճգնաժամային կառավարիչներ կամ թիմ և սահմանում է դրանց դերը.

ը) սահմանում են այն եղանակները, թե ինչպես են շուկայական միջոցները, հատկապես II հավելվածում նշված միջոցները նպաստում տազնապի մակարդակում իրավիճակը շտկելուն և արտակարգ իրավիճակի մակարդակում իրավիճակը մեղմելուն.

թ) սահմանում են այն եղանակները, թե ինչպես են նպաստում արտակարգ իրավիճակի մակարդակում իրականացված կամ իրականացվելիք ոչ շուկայական միջոցները, հատկապես III հավելվածում նշված միջոցները, գնահատում են, թե որքանով են ոչ շուկայական միջոցներն օգտագործվում ճգնաժամը վերացնելու համար, գնահատում են դրանց ազդեցությունը և սահմանում են դրանց իրականացման ընթացակարգերը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոչ շուկայական միջոցներն օգտագործվում են միայն, երբ շուկայական մեխանիզմներով այլևս հնարավոր չէ ապահովել մատակարարում, մասնավորապես գազամատակարարման համակարգի բաժանորդներին:

ժ) նկարագրում է յուրաքանչյուր ճգնաժամային մակարդակի համար մյուս անդամ պետությունների հետ համագործակցելու համար օգտագործված մեխանիզմները:

ժա) մանրամասնում են բնական գազի բնագավառի տնտեսվարող սուբյեկտների՝ տազնապի և արտակարգ իրավիճակների մակարդակում զեկուցման պարտավորությունները:

1) սահմանում են նախապես սահմանված գործողությունների ցանկը, որպեսզի գազ մատակարարվի արտակարգ իրավիճակների դեպքում՝ ներառյալ նշված գործողությունների մեջ ներգրավված կողմերի միջև առևտրային պայմանագրերը և, հարկ եղած դեպքում, բնական գազի բնագավառի տնտեսվարող սուբյեկտների փոխհատուցման մեխանիզմները՝ հաշվի առնելով կարևոր տվյալների գաղտնիությունը: Նշված գործողությունները կարող են ներառել անդամ պետությունների և (կամ) բնական գազի բնագավառի տնտեսվարող սուբյեկտների միջև միջսահմանային պայմանագրերը:

2. Արտակարգ իրավիճակներում ազգային և համատեղ գործողությունների ծրագրերը վերանայվում են յուրաքանչյուր երկու տարին մեկ անգամ, եթե հանգամանքները չեն թելադրում ավելի հաճախ կատարել վերանայում և արտացոլում են վերանայված ռիսկերի գնահատում: 4(2) հոդվածի համաձայն իրավասու մարմինների միջև նախատեսված խորհրդակցություններն իրականացվում են նախքան վերանայված պլանների ընդունումը:

3. Ճգնաժամային երեք հիմնական մակարդակներն են՝

ա) վաղ նախազգուշացման մակարդակ (վաղ նախազգուշացում)՝ երբ ստացվում է կոնկրետ, լուրջ և հուսալի տեղեկություն այնպիսի միջադեպի տեղի ունենալու մասին, որը հավանական է, որ կհանգեցնի մատակարարման զգալի վատթարացման և հավանական է, որ կհանգեցնի տազնապի կամ արտակարգ իրավիճակի մակարդակի

վերականգնմանը. վաղ նախազգուշացման մակարդակը կարող է ակտիվացվել վաղ նախազգուշացման մեխանիզմով.

բ) տագնապի մակարդակ (տագնապ)՝ երբ տեղի է ունենում մատակարարման խափանում կամ առաջանում է գազի բացառիկ մեծ պահանջարկ, որը հանգեցնում է մատակարարման իրավիճակի զգալի վատթարացման, սակայն շուկան դեռ կարող է կառավարել այդ խափանումը կամ պահանջարկը՝ առանց ոչ շուկայական միջոցներին դիմելու անհրաժեշտության.

գ) արտակարգ իրավիճակի մակարդակ (արտակարգ իրավիճակ)՝ գազի բացառիկ մեծ պահանջարկի, մատակարարման զգալի խափանման կամ մատակարարման իրավիճակի այլ զգալի վատթարացման, ինչպես նաև այն դեպքում, երբ շուկայի բոլոր համապատասխան միջոցներն իրականացվել են, սակայն գազամատակարարումը վատ է կատարվել՝ բավարարելու համար գազի մնացած պահանջարկն այնպես, որ ոչ շուկայական միջոցները լրացուցիչ կերպով ներմուծվեն՝ նպատակով ունենալով, մասնավորապես, երաշխավորելու գազամատակարարումը 8-րդ հոդվածի համաձայն գազամատակարարման համակարգի բաժանորդներին:

4. Արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագրերի շրջանակներում ապահովվում է թիվ 715/2009 կանոնակարգին (ԵՀ) համապատասխան ենթակառուցվածքների միջսահմանային մատչելիությունը, որքան որ հնարավոր է տեխնիկական և անվտանգության տեսանկյունից՝ արտակարգ իրավիճակների դեպքում: Ծրագրերը մշակվում են սույն Կանոնակարգի 3(6) հոդվածին համապատասխան և դրանց շրջանակում չեն ներմուծվում միջոցներ, որոնք անհարկի սահմանափակում են գազի հոսքը սահմաններից դուրս:

5. Երբ իրավասու մարմինը հայտարարում է 3-րդ պարբերության մեջ նշված ճգնաժամային մակարդակներից որևէ մեկը, այն անմիջապես տեղեկացնում է Հանձնաժողովին և վերջինիս է տրամադրում բոլոր անհրաժեշտ տեղեկությունները, մասնավորապես, ձեռնարկվելիք գործողությունների մասին տեղեկությունները: Արտակարգի իրավիճակի դեպքում, որի ժամանակ պահանջվում է Միության և դրա անդամ պետությունների աջակցությունը, համապատասխան անդամ պետության իրավասու մարմինն այդ մասին անհապաղ ծանուցում է Քաղաքացիական պաշտպանության դիտանցման և տեղեկատվական կենտրոնին:

6. Երբ իրավասու մարմինը հայտարարում է արտակարգ իրավիճակ, այն հետևում է Արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագրով նախապես սահմանված գործողությանը և անմիջապես տեղեկացնում է Հանձնաժողովին, մասնավորապես, 1-ին պարբերությանը համապատասխան ձեռնարկվելիք գործողությունների մասին: Պատշաճ կերպով հիմնավորված բացառիկ դեպքերում իրավասու մարմինը կարող է ձեռնարկել Արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագիր: Իրավասու մարմինն անմիջապես տեղեկացնում է Հանձնաժողովին ցանկացած նման գործողության մասին և տրամադրում է դրա հիմնավորումը:

7. Անդամ պետությունները և, մասնավորապես, իրավասու մարմիններն ապահովում են, որ.

ա) չներմուծվեն այնպիսի միջոցներ, որոնք անհարկի կսահմանափակեն ներքին շուկա ցանկացած ժամանակ գազի հոսքը.

բ) չներմուծվեն այնպիսի միջոցներ, որոնք հավանաբար լրջորեն կվտանգեն մյուս անդամ պետությունում գազամատակարարմանը.

գ) պահպանվեն, թիվ 715/2009 կանոնակարգին (ԵՀ) համապատասխան, ենթակառուցվածքների միջսահմանային մատչելիությունը, որքան որ հնարավոր է տեխնիկապես և անվտանգության տեսանկյունից՝ Արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագրին համապատասխան:

8. Հանձնաժողովը հնարավորինս շուտ, սակայն ցանկացած դեպքում 5-րդ պարբերության մեջ նշված իրավասու մարմնի տեղեկություններն ստանալուց հինգ օրվա ընթացքում, ստուգում է, թե արդյոք արտակարգ իրավիճակի հայտարարումը հիմնավորված է 3-րդ պարբերության (գ) կետին համապատասխան, և թե արդյոք ձեռնարկված միջոցների ժամանակ հնարավորինս իրականացվում են Արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագրում նշված գործողությունները, և թե արդյոք անհարկի բեռ են չեն դնում բնական գազի բնագավառի տնտեսվարող սուբյեկտների վրա և համապատասխանում են 7-րդ պարբերությանը: Հանձնաժողովը կարող է իրավասու մարմնի, բնական գազի բնագավառի տնտեսվարող սուբյեկտների պահանջով կամ իր նախաձեռնությամբ պահանջել իրավասու մարմնից փոփոխել այն միջոցները, որոնք հակասում են 7-րդ պարբերությամբ և սույն պարբերության առաջին նախադասությամբ սահմանված պայմաններին: Հանձնաժողովը կարող է նաև

պահանջել իրավասու մարմնից վերացնել արտակարգ իրավիճակի ռեժիմը, եթե գտնում է, որ այն այլևս հիմնավորված չէ 3-րդ պարբերության (գ) կետին համապատասխան:

Հանձնաժողովի պահանջի մասին ծանուցելուց հետո երեք օրվա ընթացքում իրավասու մարմինը փոխում է իր միջոցները և այդ մասին ծանուցում է Հանձնաժողովին կամ Հանձնաժողովին է ներկայացնում այն պատճառները, թե ինչու համաձայն չէ պահանջի հետ: Նման դեպքում Հանձնաժողովը կարող է երեք օրվա ընթացքում փոխել կամ հետ վերցնել իր պահանջը կամ հրավիրել իրավասու մարմնին կամ, հարկ եղած դեպքում, համապատասխան իրավասու մարմիններին և, եթե Հանձնաժողովն անհրաժեշտ կհամարի, Գազի համակարգման խմբին: Հանձնաժողովը մանրամասն հիմնավորում է գործողությունը փոխելու իր պահանջը: Իրավասու մարմինն ամբողջությամբ հաշվի է առնում Հանձնաժողովի դիրքորոշումը: Եթե իրավասու մարմնի վերջնական որոշումը չի համընկնում Հանձնաժողովի դիրքորոշման հետ, ապա իրավասու մարմինը ներկայացնում է նման որոշում կայացնելու հիմնավորումները:

Հոդված 11

Արձագանքը Միության և տարածաշրջանային արտակարգ իրավիճակներին

1. Արտակարգ իրավիճակ հայտարարած իրավասու մարմնի պահանջով և 10(8) հոդվածին համապատասխան ստուգելուց հետո Հանձնաժողովը կարող է հատկապես ազդեցություն կրած աշխարհագրական շրջանի համար հայտարարել Միության կամ տարածաշրջանային մակարդակով արտակարգ իրավիճակ: Արտակարգ իրավիճակ հայտարարած իրավասու մարմինների պահանջով և 10(8) հոդվածին համապատասխան ստուգելուց հետո, և եթե այս արտակարգ իրավիճակների պատճառները կապված են միմյանց հետ, Հանձնաժողովը, հարկ եղած դեպքում, հայտարարում է Միության կամ տարածաշրջանային մակարդակով արտակարգ իրավիճակ: Բոլոր դեպքերում Հանձնաժողովը, օգտագործելով իրավիճակին ամենահարմար հաղորդակցության միջոցները, հավաքում է մյուս իրավասու մարմինների կողմից տրամադրված բոլոր համապատասխան տեղեկությունների մասին տեսակետները և դրանք պատշաճ կերպով հաշվի է առնում: Երբ Հանձնաժողովը գնահատում է, որ Միության կամ տարածաշրջանային մակարդակով արտակարգ իրավիճակի հայտարարման հիմքն այլևս չի բավարարվում, ապա Հանձնաժողովը հայտարարում է Միության կամ տարածաշրջանային մակարդակով արտակարգ իրավիճակի ավարտի մասին: Բոլոր

դեպքերում Հանձնաժողովը տալիս է իր հիմնավորումները և իր որոշման մասին տեղեկացնում է Խորհրդին:

2. Հանձնաժողովը հրավիրում է Գագի համակարգման խմբի նիստ այն ժամանակ, երբ հայտարարում է Միության կամ տարածաշրջանային մակարդակով արտակարգ իրավիճակ: Միության կամ տարածաշրջանային մակարդակով հայտարարված արտակարգ իրավիճակի ժամանակ առնվազն երեք անդամ պետությունների պահանջով Հանձնաժողովը կարող է սահմանափակել անդամ պետությունների և համապատասխան իրավասու մարմինների ներկայացուցիչների մասնակցությունը Գագի համակարգման խմբի ամբողջ նիստին կամ դրա մի մասին:

3. Առաջին պարբերության մեջ նշված Միության կամ տարածաշրջանային մակարդակով արտակարգ իրավիճակի ժամանակ Հանձնաժողովը համակարգում է իրավասու մարմինների գործողությունները՝ ամբողջությամբ հաշվի առնելով Գագի համակարգման խմբի հետ խորհրդակցության արդյունքում ձևավորված համապատասխան տեղեկությունները և դրա արդյունքները: Հանձնաժողովը, մասնավորապես,

ա) ապահովում է տեղեկությունների փոխանակումը.

բ) ապահովում է անդամ պետության և տարածաշրջանային մակարդակներում Միության առնչությամբ գործողությունների համահունչությունն ու արդյունավետությունը.

գ) համակարգում է երրորդ երկրների առնչությամբ իրականացված գործողությունները:

4. Հանձնաժողովը կարող է, ըստ արտակարգ իրավիճակների, հրավիրել համապատասխան անդամ պետությունների՝ 10(1)(է) հոդվածում նշված ճգնաժամային կառավարիչներից կազմված ճգնաժամերի կառավարման խմբից: Հանձնաժողովը, ճգնաժամային կառավարիչների համաձայնությամբ, կարող է հրավիրել այլ համապատասխան շահագրգիռ կողմերի՝ ճգնաժամերի կառավարման խմբի նիստերին մասնակցելու նպատակով: Հանձնաժողովն ապահովում է, որ Գագի համակարգման խումբը պարբերաբար ծանուցվի ճգնաժամերի կառավարման խմբի ձեռնարկած աշխատանքների մասին:

5. Անդամ պետությունները և, մասնավորապես, իրավասու մարմիններն ապահովում են, որ.

ա) չներմուծվեն այնպիսի միջոցներ, որոնք անհարկի կսահմանափակեն ներքին շուկա ցանկացած ժամանակ գազի հոսքը, հատկապես դրա հոսքը՝ ազդեցություն կրած շուկաներ.

բ) չներմուծվեն այնպիսի միջոցներ, որոնք հավանաբար լրջորեն կվտանգեն մեկ այլ անդամ պետությունում գազամատակարարման իրավիճակը.

գ) պահպանվի, թիվ 715/2009 կանոնակարգին (ԵՀ) համապատասխան, ենթակառուցվածքների միջսահմանային մատչելիությունը՝ որքան որ հնարավոր է տեխնիկապես և անվտանգության տեսանկյունից՝ Արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագրին համապատասխան:

6. Եթե Հանձնաժողովը իրավասու մարմնի կամ բնական գազի բնագավառի տնտեսվարող սուբյեկտի պահանջով կամ իր նախաձեռնությամբ համարում է, որ Միության կամ տարածաշրջանային մակարդակով արտակարգ իրավիճակի ժամանակ անդամ պետության կամ իրավասու մարմնի կողմից ձեռնարկված գործողությունը կամ բնական գազի բնագավառի տնտեսվարող սուբյեկտի վարքագիծը հակասում է 5-րդ պարբերությանը, ապա Հանձնաժողովը պահանջում է, որ անդամ պետությունը կամ իրավասու մարմինը շտկի իր գործողությունը կամ ձեռնարկի այնպիսի գործողություն, որով հնարավոր կլինի ապահովել 5-րդ պարբերության հետ համապատասխանությունը՝ ուստի տեղեկացնելով նրան դրա պատճառների մասին: Անհրաժեշտ է պատշաճ կերպով հաշվի առնել գազի համակարգի՝ մշտապես անվտանգ շահագործման անհրաժեշտությունը:

Հանձնաժողովի պահանջի մասին ծանուցելուց հետո երեք օրվա ընթացքում անդամ պետությունը կամ իրավասու մարմինը շտկում է իր գործողությունը և ծանուցում է Հանձնաժողովին կամ Հանձնաժողովին է ներկայացնում վերջինիս պահանջի հետ համաձայն չլինելու պատճառների մասին: Նման դեպքում Հանձնաժողովը կարող է երեք օրվա ընթացքում, փոխել կամ չեղյալ ճանաչել իր պահանջը կամ հրավիրել անդամ պետությանը կամ իրավասու մարմինն և, եթե Հանձնաժողովը անհրաժեշտ կհամարի, Գազի համակարգման խմբին՝ հարցը քննարկելու նպատակով: Հանձնաժողովը մանրամասն հիմնավորում է գործողությունը շտկելու իր պահանջը: Անդամ պետությունը կամ իրավասու մարմինն ամբողջությամբ հաշվի է առնում Հանձնաժողովի դիրքորոշումը: Եթե իրավասու մարմնի կամ անդամ պետության վերջնական որոշումը չի

համընկնում Հանձնաժողովի դիրքորոշման հետ, ապա իրավասու մարմինը կամ անդամ պետությունը ներկայացնում է նման որոշում կայացնելու հիմնավորումները:

7. Հանձնաժողովը, Գազի համակարգման խմբի հետ խորհրդակցելուց հետո, ստեղծում է արդյունաբերության փորձագետների և Հանձնաժողովի ներկայացուցիչներից բաղկացած մոնիտորինգի հանձնախմբի մշտապես գործող ռեզերվ: Մոնիտորինգի հանձնախումբը, հարկ եղած դեպքում, կարող է ներգրավվել Միության տարածքից դուրս իրականացվող աշխատանքներում, որը, մատակարարող և փոխանցող երրորդ երկրների հետ համագործակցությամբ, կդիտանցի և զեկույց կներկայացնի Միություն գազի հոսքի մասին:

8. Իրավասու մարմինը Հանձնաժողովի Քաղաքացիական պաշտպանության դիտանցման և տեղեկատվական կենտրոնին տրամադրում է աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտության մասին տեղեկություններ: Քաղաքացիական պաշտպանության դիտանցման և տեղեկատվական կենտրոնը գնահատում է ընդհանուր իրավիճակը և խորհրդատվություն է տրամադրում ամենաշատն ազդեցություն կրած անդամ պետություններին և, հարկ եղած դեպքում, երրորդ երկրներին տրամադրվելիք աջակցության մասով:

Հոդված 12

Գազի համակարգման խումբը

1. Գազի համակարգման խումբն ստեղծվել է՝ դյուրացնելու համար գազի անխափան մատակարարման ուղղությամբ ձեռնարկվող միջոցների համակարգումը: Խումբը կազմված է անդամ պետությունների, մասնավորապես դրանց իրավասու մարմինների, ինչպես նաև գործակալության, Գազի ՓՀՕԵՑ-ի ներկայացուցիչներից և համապատասխան արդյունաբերության ճյուղի ներկայացուցչական մարմիններից և համապատասխան սպառողներից: Հանձնաժողովը, անդամ պետությունների հետ խորհրդակցելով, որոշում է խմբի կազմը՝ ապահովելով դրա՝ լրիվ ներկայացուցչականությունը: Խումբը նախագահում է Հանձնաժողովը: Խումբն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

2. Սույն Կանոնակարգին համապատասխան Հանձնաժողովը խորհրդակցում է Գազի համակարգման խմբի հետ, որն աջակցում է Հանձնաժողովին, մասնավորապես հետևյալ հարցերի շուրջ՝

ա) գազի անխափան մատակարարումը ցանկացած ժամանակ և ավելի կոնկրետ արտակարգ իրավիճակի դեպքում.

բ) ազգային, տարածաշրջանային և Միության մակարդակով գազի անխափան մատակարարման համար կարևոր բոլոր տեղեկությունները.

գ) համապատասխան բոլոր կողմերի լավագույն գործելակերպերը և հնարավոր ուղեցույցները.

դ) գազի անխափան մատակարարման մակարդակը, հետանիշերը և գնահատման մեթոդաբանությունները.

ե) ազգային, տարածաշրջանային և Միության սցենարները և պաշտպանվածության մակարդակների ստուգումը.

զ) Կանխարգելման գործողությունների ծրագրերի և վթարային պլանների գնահատումը և դրանցով նախատեսված միջոցների իրականացումը.

է) Միության, Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի հիմնադրման պայմանագրի կողմ հանդիսացող երրորդ երկրների տարածքում վթարի վերացման միջոցների համակարգումը.

ը) ամենաշատ ազդեցություն կրած անդամ պետությունների համար անհրաժեշտ աջակցությունը:

3. Հանձնաժողովը պարբերաբար իրավիրում է Գազի համակարգման խմբի նիստ և փոխանակում է իրավասու մարմինների կողմից ստացված տեղեկությունները՝ միևնույն ժամանակ պահպանելով առևտրային տեսանկյունից կարևոր տեղեկությունների գաղտնիությունը:

Տեղեկատվության փոխանակումը

1. Եթե անդամ պետություններն ունեն հանրային ծառայության մասով ստանձնած պարտավորություններ, որոնք վերաբերում են գազի անխափան մատակարարմանը, ապա նրանք այս մասին հրապարակում են մինչև 2011 թվականի հունվարի 3-ը: Գազի անխափան մատակարարման մասով հետագայում կատարվող ցանկացած վերանայման կամ հանրային ծառայության մասով լրացուցիչ պարտավորությունների դեպքում, դրանք հրապարակվում են այն ժամանակ, երբ ընդունվում են անդամ պետությունների կողմից:

2. Արտակարգ իրավիճակի դեպքում բնական գազի բնագավառի համապատասխան տնտեսվարող սուբյեկտներն օրվա կտրվածքով իրավասու մարմինն են տրամադրում, մասնավորապես, հետևյալ տեղեկությունները՝

ա) հաջորդ երեք օրերի կտրվածքով գազի ամենօրյա առաջարկի ու պահանջարկի կանխատեսումները.

բ) գազի ամենօրյա հոսքը միջսահմանային մուտքի և ելքի բոլոր կետերով, ինչպես նաև արտադրամասերը, պահեստները կամ ՀԲԳ-ի տերմինալը ցանցին միացնող բոլոր կետերով՝ արտահայտված հազար խորանարդ մետր/օրով.

գ) օրերով արտահայտված այն ժամկետը, որի ընթացքում ակնկալվում է գազի մատակարարումը գազամատակարարման համակարգի բաժանորդներին:

3. Եթե արտակարգ իրավիճակը տեղի է ունեցել Միության կամ տարածքային մակարդակում, ապա Հանձնաժողովն իրավունքի ունի պահանջելու, որ իրավասու մարմինն անհապաղ այդ մասին առնվազն տրամադրի հետևյալը՝

ա) 2-րդ պարբերությամբ սահմանված տեղեկությունները.

բ) իրավասու մարմնի կողմից վթարի հետևանքները մեղմելու առնչությամբ ձեռնարկվելիք և արդեն իսկ ձեռնարկված միջոցների, ինչպես նաև դրանց արդյունավետության վերաբերյալ տեղեկությունները.

գ) այլ իրավասու մարմինների կողմից լրացուցիչ միջոցներ ձեռնարկելու խնդրանքը.

դ) այլ իրավասու մարմինների խնդրանքով իրականացված միջոցները:

4. Իրավասու մարմիններն ու Հանձնաժողովը պահպանում են առևտրային տեսանկյունից կարևոր տեղեկությունների գաղտնիությունը:

5. Վթարից հետո իրավասու մարմինները, հնարավորինս շուտ և վթարը վերացնելուց հետո առնվազն վեց շաբաթվա ընթացքում, Հանձնաժողովին են տրամադրում վթարի գնահատման, դրա վերացման ուղղությամբ իրականացված միջոցների արդյունավետության՝ ներառյալ վթարի տնտեսական ազդեցության, էլեկրաէներգիայի ոլորտի վրա վթարի ներազդեցության և Միությանն ու իր անդամ պետություններին տրամադրված և (կամ) դրանցից ստացված աջակցության մանրամասն գնահատման զեկույց: Նշված զեկույցը տրամադրվում է Գազի համակարգման խմբին և արտացոլվում է Կանխարգելիչ գործողությունների ծրագրերի և Արտակարգ իրավիճակների արձագանքելու ծրագրի թարմացված տարբերակում:

Հանձնաժողովը վերլուծում է իրավասու մարմինների գնահատման զեկույցները և տեղեկացնում է անդամ պետություններին, Եվրոպական պառլամենտին և Գազի համակարգման խմբին իր կողմից կատարված վերլուծության արդյունքների մասին:

6. Անդամ պետությունները, որպեսզի թույլ տան Հանձնաժողովին գնահատել Միության մակարդակում գազի անխափան մատակարարման իրավիճակը՝

ա) ամենաուշը մինչև 2011 թվականի դեկտեմբերի 3-ը, Հանձնաժողովին են փոխանցում երրորդ երկրների հետ կնքված գործող միջկառավարական համաձայնագրերը, որոնք ներգործություն ունեն գազի ոլորտի ենթակառուցվածքների և գազամատակարարումների զարգացման վրա: Երրորդ երկրների հետ՝ նման ներգործություն ունեցող նոր միջկառավարական համաձայնագրեր կնքելիս անդամ պետությունները Հանձնաժողովին են տեղեկացնում՝

բ) ամենաուշը մինչև 2011 թվականի դեկտեմբերի 3-ը գործող պայմանագրերի, ինչպես նաև նոր պայմանագրերի մասին, գործող պայմանագրերում փոփոխություններ կատարելու դեպքում բնական գազի բնագավառի տնտեսվարող սուբյեկտները համապատասխան իրավասու մարմիններին են ծանուցում երրորդ երկրների մատակարարների հետ մեկ տարուց ոչ ավելի գործողության ժամկետ ունեցող պայմանագրերի մասին հետևյալ մանրամասները՝

գ) պայմանագրի գործողության ժամկետը.

ii) պայմանագրով սահմանված գազամատակարարման տարեկան ընդհանուր ծավալները և յուրաքանչյուր ամսվա կտրվածքով դրա միջին ծավալը.

iii) տազնապի կամ վթարի դեպքում պայմանագրով սահմանված գազամատակարարման օրական առավելագույն ծավալները.

iv) պայմանագրով սահմանված՝ մատակարարման կետերը:

Իրավասու մարմինը տվյալներն ամբողջական տեսքով տրամադրվում է Հանձնաժողովին: Եթե կնքվում են նոր պայմանագրեր կամ գործող պայմանագրերում փոփոխություններ են կատարվում, ապա ամբողջ տվյալներն ամբողջական տեսքով պարբերաբար տրամադրվում են Հանձնաժողովին: Իրավասու մարմիններն ու Հանձնաժողովն ապահովում են տեղեկությունների գաղտնիությունը:

Հոդված 14

Հանձնաժողովի կողմից դիտանցումը

Հանձնաժողովը շարունակաբար դիտանցում և զեկույց է կազմում գազամատակարարման միջոցների մասին, հատկապես, 2009/73/ԵՀ հրահանգի 5-րդ հոդվածում նշված զեկույցների տարեկան գնահատման և նշված հրահանգի 11-րդ հոդվածի և 52(1) հոդվածի իրականացմանը վերաբերող տեղեկությունների և, առկայության դեպքում, ռիսկի գնահատմամբ և սույն Կանոնակարգին համապատասխան հաստատված՝ Կանխարգելիչ գործողությունների ծրագրերի և Արտակարգ իրավիճակներին արձագանքելու ծրագրում ներկայացված տեղեկությունների միջոցով:

Հանձնաժողովը, ամենաուշը 2014 թվականի դեկտեմբերի 3-ը, 4(6) հոդվածում նշված զեկույցի հիման վրա և Գազի համակարգման խմբի հետ խորհրդակցելուց հետո՝

ա) եզրակացություններ է կատարում այն հնարավոր միջոցների մասով, որոնք հնարավորություն են տալիս Միության մակարդակով մեծացնել անխափան մատակարարումը, Միության մակարդակով գնահատել ռիսկերի գնահատումներ իրականացնելու և Կանխարգելիչ գործողությունների ծրագրերի և Արտակարգ իրավիճակներին արձագանքելու ծրագրեր մշակելու իրագործելիությունը և զեկույց ներկայացնել Եվրոպական պառլամենտին ու Խորհրդին սույն Կանոնակարգի

իրականացման՝ ներառյալ, մասնավորապես, շուկայի փոխկապակցվածության ուղղությամբ արձանագրված առաջընթացի վերաբերյալ.

բ) զեկույց է ներկայացնում Եվրոպական պառլամենտին և Խորհրդին անդամ պետությունների Կանխարգելիչ գործողությունների ծրագրերի և Արտակարգ իրավիճակներին արձագանքելու ծրագրերի ընդհանուր համահունչության, ինչպես նաև դրանց՝ Միության տեսանկյունից համերաշխությանն ու պատրաստվածությանը նպաստելու վերաբերյալ:

Հարկ եղած դեպքում, զեկույցին կցվում են սույն Կանոնակարգը բարելավելու վերաբերյալ առաջարկություններ:

Հոդված 15

Ուժը կորցրած ճանաչելը

Չհակասելով 2004/67/ԵՀ հրահանգը փոխատեղելու և կիրառելու վերջնաժամկետներին վերաբերող անդամ պետությունների պարտավորություններին՝ այդ հրահանգն ուժը կորցրված է ճանաչվում 2010 թվականի դեկտեմբերի 2-ից՝ բացառությամբ այդ հրահանգի 4(1) և (2) հոդվածի, որը գործում է, մինչև համապատասխան անդամ պետությունը չի սահմանել գազամատակարարման համակարգի բաժանորդներին սույն Կանոնակարգի 2(1) հոդվածին համապատասխան և չի որոշել բնական գազի բնագավառի տնտեսվարող սուբյեկտներին սույն Կանոնակարգի 8(1) հոդվածին համապատասխան:

Չնայած սույն հոդվածի առաջին պարբերությանը՝ 2004/67/ԵՀ հրահանգի 4(1) և (2) հոդվածը այլևս չի կիրառվի 2012 թվականի հունիսի 3-ից հետո:

Հոդված 16

Շեղումները

Սույն Կանոնակարգը չի կիրառվում Մալթայի և Կիպրոսի նկատմամբ, քանի որ նրանց համապատասխան տարածքներով գազ չի մատակարարվում: Մալթայի և Կիպրոսի դեպքում 2-րդ հոդվածի երկրորդ պարբերության (1) կետով և հոդվածներ 3(2), 4(2) և (5),

6(1) և (5), 8(1) և 9(1) և 13(6)(ա) և (բ)–ով կիրառվող վերջնաժամկետները կիրառվում են հետևյալ կերպ՝

ա) 2–րդ հոդվածի երկրորդ պարբերության (1) կետի, հոդվածներ 3(2), 9(1) և 13(6)(ա) և (բ)–ի դեպքում՝ 12 ամիս.

բ) հոդվածներ 4(2) և 8(1)–ի դեպքում՝ 18 ամիս.

գ) 4(5) հոդվածի դեպքում՝ 24 ամիս.

դ) 6(5) հոդվածի դեպքում՝ 36 ամիս.

ե) 6(1) հոդվածի դեպքում՝ 48 ամիս.

այն օրը, երբ գազն առաջին անգամ մատակարարվում է իրենց համապատասխան տարածքներով:

Հոդված 17

Ուժի մեջ մտնելը

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության Պաշտոնական տեղեկագրում հրապարակումից հետո 20–րդ օրը:

Հոդվածներ 6(8), 10(4) հոդվածի առաջին նախադասությունը, 10(7)(գ) և 11(5)(գ)–ն կիրառվում են 2011 թվականի մարտի 3–ից:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է և անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Ստրասբուրգում, 2010 թվականի հոկտեմբերի 20–ին:

Եվրոպական պառլամենտի կողմից

Նախագահ՝

Ժ. Բուզեկ

Խորհրդի կողմից՝

Նախագահ՝

Օ. Չեսթեկ

[1] 2010 թվականի հունվարի 20-ին ներկայացված եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել):

[2] Եվրոպական պառլամենտի 2010 թվականի սեպտեմբերի 21-ի դիրքորոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել) և Խորհրդի 2010 թվականի հոկտեմբերի 11-ի որոշում:

[3] ՊՏ L 127, 29.04.2004թ., էջ 92:

[4] ՊՏ L 198, 20.07.2006թ., էջ 18:

[5] ՊՏ L 211, 14.08.2009թ., էջ 1:

[6] ՊՏ L 211, 14.08.2009թ., էջ 36:

[7] ՊՏ L 211, 14.08.2009թ., էջ 94:

[8] ՊՏ L 314, 01.12.2007թ., էջ 9:

[9] ՊՏ L 345, 23.12.2008թ., էջ 75:

N – 1 ԲԱՆԱԾԵՎԻ ՀԱՇՎԱՐԿԸ

1. N – 1 բանաձևի սահմանումը

N – 1 բանաձևը նկարագրում է գազի ոլորտի ենթակառուցվածքի տեխնիկական հնարավորությունները՝ բավարարելու համար հաշվարկային մակերեսում գազի ընդհանուր պահանջարկն այն դեպքում, երբ խափանվում է գազի միասնական ամենախոշոր ենթակառուցվածքը գազի բացառիկ մեծ պահանջարկի գրանցման այն օրվա ընթացքում, որը, ըստ վիճակագրական հավանականությամբ, տեղի է ունենում 20 տարին մեկ անգամ:

Գազի ենթակառուցվածքը ներառում է գազի փոխադրման ցանցը՝ ներառյալ հաշվարկային մակերեսում միացման խողովակաշարերը, ինչպես նաև արտադրամասերը, ՀԲԳ-ի կայանները և պահեստարանները:

Գազի միասնական ամենախոշոր ենթակառուցվածքի խափանման դեպքում մնացած մյուս բոլոր գազի ոլորտի ենթակառուցվածքների տեխնիկական հնարավորությունը [1] պետք է առնվազն հավասար լինի հաշվարկային մակերեսի՝ վիճակագրական հավանականությամբ 20 տարին մեկ անգամ տեղի ունեցող գազի բացառիկ մեծ պահանջարկ գրանցող օրվա ընթացքում օրական գազի ընդհանուր պահանջարկի գումարին:

N – 1 բանաձևի արդյունքը, որը հաշվարկված է ստորև, պետք է առնվազն հավասար լինի 100 տոկոսին:

2. N – 1 բանաձևի հաշվարկման մեթոդը

$$N - 1 = EP + P + S + LNG - ID \times 100, N - 1 \geq 100 \%$$

3. N – 1 բանաձևի պարամետրերի սահմանումը

«Հաշվարկային մակերես» նշանակում է աշխարհագրական տարածք, որի համար հաշվարկվում է իրավասու մարմնի կողմից սահմանված N – 1 բանաձևը:

Պահանջարկին ուղղված սահմանումը

«Dmax» նշանակում է հաշվարկային մակերեսի՝ վիճակագրական հավանականությամբ 20 տարին մեկ անգամ տեղի ունեցող գազի բացառիկ մեծ պահանջարկ գրանցող օրվա ընթացքում օրական գազի ընդհանուր պահանջարկը (հազար խմ/օր)։

Առաջարկին ուղղված սահմանումներ՝

«EPm»՝ Pm, Sm և LNGm կարգավորվող արտադրամասերից, ՀԲԳ–ի կայաններից և պահեստարաններից բացի, մուտքի կետերի (հազար խմ/օր) տեխնիկական հնարավորությունները նշանակում են հաշվարկային մակերեսին գազ մատակարարելու հնարավորություն ունեցող սահմանային բոլոր մուտքի կետերի տեխնիկական հնարավորությունների հանրագումարը։

«Pm» արտադրական առավելագույն տեխնիկական կարողություններ (հազար խմ/օր) նշանակում է գազի բոլոր արտադրամասերի օրվա կտրվածքով արտադրական առավելագույն տեխնիկական կարողությունների հանրագումարը, որը կարող է փոխադրվել հաշվարկային մակերեսում մուտքի կետեր։

«Sm»՝ գազ առաքելու առավելագույն տեխնիկական ունակություն (հազար խմ/օր) նշանակում է բոլոր պահեստարաններից օրական արտամղման տեխնիկական կարողությունների հանրագումարը, որը կարող է փոխադրվել հաշվարկային մակերեսում մուտքի կետեր՝ հաշվի առնելով դրանց համապատասխան ֆիզիկական առանձնահատկությունները։

«LNGm»՝ ՀԲԳ–ի կայանի առավելագույն տեխնիկական հնարավորությունները (հազար խմ/օր) նշանակում են հաշվարկային մակերեսում ՀԲՆ–ի բոլոր կայանների օրվա կտրվածքով գազ բաց թողնելու առավելագույն տեխնիկական հնարավորությունների հանրագումարը՝ հաշվի առնելով կրիտիկական տարրերը, ինչպես օրինակ՝ գազի բացթողումը, օժանդակ ծառայությունները, ՀԲՆ–ի ժամանակավոր պահեստավորումը և վերագազաֆիկացումը, ինչպես նաև համակարգ գազ բաց թողնելու տեխնիկական հնարավորությունները։

«Im» նշանակում է գազի միասնական ամենախոշոր ենթակառուցվածքի տեխնիկական հնարավորությունը (հազար խմ/օր), որով հնարավոր է ապահովել հաշվարկային մակերեսի գազամատակարարումը։ Երբ մի քանի գազի ենթակառուցվածքներ միացված են վերընթաց կամ վայրընթաց անցկացված ընդհանուր գազի ենթակառուցվածքին և չեն կարող շահագործվել առանձին, դրանք համարվում են որպես մեկ միասնական գազի ենթակառուցվածք։

4. N – 1 բանաձևի հաշվարկը՝ կիրառելով պահանջարկին ուղղված միջոցները

$$N - 1 = EP + P + S + LNG - ID - D \times 100, N - 1 \geq 100 \%$$

Պահանջարկին ուղղված սահմանումը

«Deff» նշանակում է Dmax–ի մաս (հազար խմ/օր), որը մատակարարման խափանումների դեպքում կարող են բավարար կերպով և ժամանակին կարգավորվել պահանջարկին ուղղված շուկայական միջոցներով՝ 5(1)(բ) և 6(2) հոդվածներին համապատասխան:

5. N – 1 բանաձևի հաշվարկը՝ տարածաշրջանային մակարդակում

Երեք կետում նշված՝ համապատասխան անդամ պետությունների իրավասու մարմինների կողմից սահմանված հաշվարկային տարածքը, հարկ եղած դեպքում, կիրառվում է համապատասխան տարածաշրջանային մակարդակում: Տարածաշրջանային մակարդակում N – 1 բանաձևի հաշվարկման համար կիրառվում է ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող՝ գազի միասնական ամենախոշոր ենթակառուցվածքը: Տարածաշրջանի համար ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող գազի միասնական ամենախոշոր ենթակառուցվածքը տարածաշրջանում գազի ամենախոշոր ենթակառուցվածքն է, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն նպաստում է այդ տարածաշրջանի անդամ պետությունների գազամատակարարմանը և սահմանվում է Կանխարգելիչ գործողությունների համատեղ ծրագրում:

Տարածաշրջանային N – 1 հաշվարկը կարող է միայն փոխարինել ազգային N – 1 հաշվարկին, եթե ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող՝ գազի միասնական ամենախոշոր ենթակառուցվածքը առանձնակի կարևորություն է ներկայացնում համապատասխան բոլոր անդամ պետությունների համար՝ ըստ համատեղ գնահատման:

[1] թիվ 715/2009 կանոնակարգի 2(1)(18) հոդվածի համաձայն՝ «տեխնիկական հնարավորություն» նշանակում է այն առավելագույն հաստատուն թողունակությունը, որը բնական գազի փոխադրման համակարգի օպերատորը կարող է առաջարկել ցանցի օգտագործողներին՝ հաշվի առնելով համակարգի ամբողջականությունն ու բնական գազի փոխադրման ցանցի շահագործման պահանջները:

ԳԱԶԻ ԱՆԽԱՓԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Իրավասու մարմինը, Կանխարգելիչ գործողությունների ծրագիրը և Արտակարգ իրավիճակներին արձագանքելու ծրագիրը մշակելիս, հաշվի է առնում սույն հավելվածով սահմանված կողմնորոշիչ և ոչ սպառիչ միջոցների ցանկը: Իրավասու մարմինը պատշաճ կերպով հաշվի է առնում Կանխարգելիչ գործողությունների ծրագիրը և Արտակարգ իրավիճակներին արձագանքելու ծրագիրը մշակելիս առաջարկվող միջոցների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցությունը և հնարավորինս նախապատվությունը տալիս է այն միջոցներին, որոնք ամենաքիչն ազդեցություն ունեն շրջակա միջավայրի վրա գազի անխափան մատակարարման հայեցակետերը հաշվի առնելիս:

Առաջարկին ուղղված միջոցները՝

- արտադրության առավել մեծ ճկունությունը.
- ներմուծման առավել մեծ ճկունությունը.
- էներգիայի վերականգնվող աղբյուրներից ստացվող գազի ներմուծումը՝ գազի փոխադրման ցանցի ենթակառուցվածք դյուրինացնելը.
- առևտրային գազի պահեստավորումը – արտամղման կարողություն և պահեստավորված գազի ծավալը.
- ՀԲԳ-ի տերմինալի տարողունակությունը և բաց թողնման առավելագույն կարողությունը.
- գազամատակարարման և գազամատակարարման ուղիների բազմազանեցումը.
- հետադարձ հոսքը.
- բնական գազի փոխադրման համակարգի օպերատորների կողմից գազի համակարգված մատակարարումը.
- կարճաժամկետ և երկարաժամկետ պայմանագրերի կիրառումը.
- ներդրումները ենթակառուցվածքներում՝ ներառյալ փոխմիացումների երկկողմ թողունակության ապահովման գործում.
- պայմանագրային պայմանավորվածությունները՝ գազի անխափան մատակարարում ապահովելու նպատակով.

Պահանջարկին ուղղված միջոցները՝

- դադարեցվող պայմանագրերի կիրառումը.
- վառելիքի այլ տեսակին անցնելու հնարավորությունները՝ ներառյալ այլընտրանքային, պահուստային վառելիքի օգտագործումը արդյունաբերական ձեռնարկություններում և էներգաբլոկերում.
- հաստատուն բեռնվածքի կամավոր կրճատումը.
- աճող արդյունավետությունը.
- վերականգնվող էներգիայի աղբյուրների լայնածավալ օգտագործումը:

ԳԱԶԻ ԱՆԽԱՓԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՈՉ ՇՈՒԿԱՅԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Իրավասու մարմինը, Կանխարգելիչ գործողությունների ծրագրի և Արտակարգ իրավիճակներին արձագանքելու ծրագիրը մշակելիս, հաշվի է առնում հետևյալ կողմնորոշիչ և ոչ սպառիչ միջոցների ցանկը միայն արտակարգ իրավիճակի դեպքում՝

Առաջարկին ուղղված միջոցները՝

- ռազմավարական գազի պահեստների օգտագործումը.
- այլընտրանքային վառելիքի պաշարների հարկադրված օգտագործումը («Չմշակված նավթի և (կամ) նավթամթերքների նվազագույն պաշարների պահպանման մասով անդամ պետությունների վրա պարտավորություն սահմանելու մասին» Խորհրդի 2009 թվականի սեպտեմբերի 14-ի 2009/119/ԵՀ հրահանգ [1]).
- գազից բացի այլ աղբյուրներից ստացված էլեկտրականության հարկադրված օգտագործումը.
- գազի արտադրության ծավալների հարկադրված մեծացումը.
- պահեստարանից գազի դուրսբերումը.

Պահանջարկին ուղղված միջոցները՝

- պահանջարկի պարտադիր կրճատմանն ուղղված տարբեր քայլերը՝ ներառյալ
- հարկադրված անցումը այլընտրանքային վառելիքի տեսակներին.
- դադարեցվող պայմանագրերի հարկադրված կիրառումը, երբ դրանք ամբողջությամբ չեն օգտագործվում որպես շուկայական միջոցների մաս.
- մշտական բեռնվածքի հարկադրված կրճատումը:

[1] ՊՏ L 265, 09.10.2009թ., էջ 9:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

«Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագրի 194-րդ հոդվածին համապատասխան և 2009/73/ԵՀ հրահանգի 6-րդ հոդվածում և թիվ 715/2009 կանոնակարգի (ԵՀ) 12-րդ հոդվածում նշված կարգով տարածաշրջանային համագործակցությունն արտացոլում է համերաշխության ոգին և նաև սույն Կանոնակարգի հիմնական հասկացությունն է: Տարածաշրջանային համագործակցությունն անհրաժեշտ է, մասնավորապես, սահմանելու համար ռիսկի գնահատումը (9-րդ հոդված), Կանխարգելիչ գործողությունների ծրագրերը և Արտակարգ իրավիճակներին արձագանքելու ծրագրերը (4-րդ, 5-րդ և 10-րդ հոդվածներ), ենթակառուցվածքների և մատակարարման ստանդարտները (6-րդ և 8-րդ հոդվածներ) և Միության ու տարածաշրջանային մակարդակում արտակարգ իրավիճակներին արձագանքելու համար դրույթները (11-րդ հոդված):

Սույն Կանոնակարգի համաձայն տարածաշրջանային համագործակցությունը հիմնվում է բնական գազի բնագավառի տնտեսվարող սուբյեկտների, անդամ պետությունների և կարգավորող ազգային մարմինների մասնակցությամբ՝ առկա տարածաշրջանային համագործակցության վրա՝ ապահովելու համար, ի թիվս այլ նպատակների, մատակարարման անխափանությունը և էներգիայի ներքին շուկայի ինտեգրումը, ինչպես օրինակ՝ գազի տարածաշրջանային երեք շուկաների ինտեգրումը գազի ոլորտում տարածաշրջանային նախաձեռնության, գազային պլատֆորմի, Բալթյան երկրների էներգիայի շուկայի փոխկապակցման պլանի բարձրաստիճան խմբի և էներգահամայնքի մատակարարման անխափանության համակարգման խմբի շրջանակներում: Այնուամենայնիվ, հավանական է, որ գազամատակարարման անխափանությունն ապահովող հատուկ պահանջները կխթանեն համագործակցության նոր շրջանակներ և համագործակցության գործող ոլորտները պետք է փոփոխվեն՝ լավագույն արդյունավետություն ապահովելու համար:

Աստիճանաբար փոխկապակցված և փոխադարձ կախվածության մեջ գտնվող շուկաների և գազի ներքին շուկայի ձևավորման լույսի ներքո հետևյալ անդամ պետությունների՝ որպես օրինակ և ի թիվս այլոց՝ ներառյալ հարևան անդամ պետությունների որոշ շրջանների միջև համագործակցությունը կարող է ապահովել իրենց առանձին և կոլեկտիվ գազամատակարարման անխափանության ապահովումը՝

- Լեհաստան և Բալթյան երեք պետություններ (Էստոնիա, Լատվիա և Լիտվա).
- Պիրենեյան թերակղզի (Իսպանիա և Պորտուգալիա) և Ֆրանսիա.
- Իռլանդիա և Միացյալ Թագավորություն.
- Բուլղարիա, Հունաստան և Ռումինիա.
- Դանիա և Շվեդիա.
- Սլովենիա, Իտալիա, Ավստրիա, Հունգարիա և Ռումինիա.
- Լեհաստան ու Գերմանիա
- Ֆրանսիա, Գերմանիա, Բելգիա, Նիդեռլանդներ ու Լյուքսեմբուրգ.
- Գերմանիա, Չեխիայի Հանրապետություն ու Սլովակիա
- այլ երկրներ:

Անհրաժեշտության և նպատակահարմարության դեպքում անդամ պետությունների միջև տարածաշրջանային համագործակցությունը կարող է ընդլայնվել՝ ամրապնդելու համար հարևան անդամ պետությունների հետ համագործակցությունը, մասնավորապես գազի կղզյակների դեպքում, հատկապես նպատակ ունենալով մեծացնել փոխմիացումները: Անդամ պետությունները կարող են լինել համագործակցության տարբեր խմբերի մաս: